ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր

© Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), 2022թ.
Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ թարգմանելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել ՅՈՒՆԻՍԵՖ- ի գրավոր թույլտվությունը՝ հարցում ուղարկելով հետևյալ հասցեներին. ՅՈՒՆԻՍԵՖ, Պետրոս Ադամյան փող. 14, Երևան, 0010, Էլ. հասցե՝ yerevan@unicef.org

ՅՈՒՆԻՍԵՖ-ի լուսանկարները պաշտպանված են հեղինակային իրավունքով և չպետք է վերատպվեն որևէ հարթակում՝ առանց ՅՈՒՆԻՍԵՖ-ից նախնական գրավոր թույլտվություն ստանալու: ՅՈՒՆԻՍԵՖ-ի լուսանկարները տարածելու/վերատպելու վերաբերյալ հարցումները պետք է ուղղվեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակին՝ Պետրոս Ադամյան փող. 14, Երևան, 0010 կամ yerevan@unicef.org էլ.հասցեին:

Կազմի լուսանկարը՝ © UNICEF Armenia/2019/Պիցցոֆերատո

Երևան, 2022

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր

«Նախադպրոցական կրթության ոլորտի համապարփակ վերլուծություն» ուսումնասիրությունը պատվիրել է ՅՈՒՆԻՍԵՖ-ը Կրթության համաշխարհային գործընկերության (ԿՀԳ) հիմնադրամի՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրած «Կրթության ոլորտի զարգացման ծրագիր» դրամաշնորհի շրջանակում: Ուսումնասիրությունը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) հետ քննարկման արդյունքում: Ուսումնասիրությունն իրականացրել է փորձագիտական խումբը, գնահատել են անկախ գրախոսներ, և վերանայել են ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ)՝ համապատասխանաբար դրամաշնորհային գործակալի և համակարգող գործակալության աշխատակիցները/խորհրդատուները՝ ընտրված տեղական կրթական խմբի կողմից (ՏԿԽ), որը ստեղծել է ԿԳՄՍՆ-ն ԿՀԳ հիմնադրամի հետ համագործակցության շրջանակում:

Երախտագիտություն

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ) բարձր է գնահատում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) անգնահատելի աջակցությունն այս զեկույցի պատրաստման գործում: Մասնավորապես շնորհակալություն ենք հայտնում Թեհմինե Կարախանյանին (Նախակրթական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի ավագ մասնագետ), ում հետևողական աջակցությունը Նախադպրոցական կրթության ոլորտի համապարփակ վերլուծության ընթացքում ապահովեց նախարարության հետ սահուն հաղորդակցությունը և ոլորտի նոր հանրային նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը, առանց որի հնարավոր չէր լինի հավաքագրել արդի տվյալներ նախադպրոցական կրթության ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման շատ ասպեկտների վերաբերյալ: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Աստղիկ Բալայանին (Գնահատման բաժնի մասնագետ, Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն հիմնադրամ), ում ներդրումը կենսական նշանակություն ունեցավ Նախադպրոցական կրթության ոլորտի համապարփակ վերլուծության նախագծման համար:

Այս զեկույցը պատրաստվել է հետազոտական թիմի կողմից, որը բաղկացած է հետևյալ խորհրդատուներից՝ Քրիստինա Սարգսյան (թիմի ղեկավար), Աննա Թադևոսյան (ավագ փորձագետ), Լիանա Հովհաննիսյան (կրտսեր փորձագետ) և Նանե Հովաննեսյան (կրտսեր փորձագետ)՝ անկախ սոցիոլոգի (Արևիկ Համբարձումյան) աջակցությամբ, ով հիմնական թիմի հետ համատեղ իրականացրել է ֆոկուս խմբային քննարկումները և սղագրել տվյալները: Աշխատանքներն իրականացվել են Ալվարդ Պողոսյանի (Կրթության մասնագետ, ՅՈՒՆԻՍԵՖ) և Արման Գասպարյանի (Կրթության համակարգող, ՅՈՒՆԻՍԵՖ) ընդհանուր ղեկավարությամբ: Ջեսիկա Քեթրին Բրաունը (Վաղ մանկության զարգացման մասնագետ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ) իրականացրել է զեկույցի վերանայումը և կազմակերպել կողմնորոշիչ նիստ՝ թիմին առաջնորդելու Նախադպրոցական ենթաոլորտային վերլուծության

գործիքի կիրառման վերաբերյալ, որը կազմում է ECE Accelerator գործիքակազմի մաս՝ https://www.ece-accelerator.org/:

Թիմն անչափ երախտապարտ է Ադրինե Բաբլոյանին (Հետազոտության և գնահատման համակարգող, ՅՈՒՆԻՍԵՖ) և Աստղիկ Մարտիրոսյանին (Երեխաների իրավունքների մոնիտորինգի և գնահատման մասնագետ, ՅՈՒՆԻՍԵՖ) մասնագիտական գրախոսության համար, Զոյա Անդեկյանին (ծրագրի օգնական, ՅՈՒՆԻՍԵՖ) վարչական հարցերում աջակցության համար, ինչպես նաև Քրիստիան Գարբիս Ադանալյանին և Ազնիվ Նասլյանին՝ համապատասխանաբար, վերջնական զեկույցի անգլերեն և հայերեն տարբերակները սրբագրելու համար: Շնորհակալություն ենք հայտնում նաև Նարեկ Մանուկյանին (Ծրագրի խորհրդական, ԱԶԲ)՝ կրթության ոլորտի վերլուծության տարբեր փուլերում ուղղորդման և առաջարկությունների համար:

Վերջապես, մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել նախադպրոցական կրթության հաստատությունների բոլոր ծնողներին, ուսուցիչներին և տնօրեններին, ինչպես նաև տարրական դասարանների ուսուցիչներին, ովքեր ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում ազատ և բաց կիսվեցին Հայաստանում նախադպրոցական կրթության ոլորտի վերաբերյալ իրենց տեսակետներով: Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում հանրային գերատեսչությունների, մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և զարգացման գործընկերների ներկայացուցիչներին ու անկախ փորձագետներին, ովքեր պատրաստակամորեն տրամադրեցին մեզ իրենց ժամանակը՝ ներկայացնելու Հայաստանում նախադպրոցական կրթության քաղաքականության և պրակտիկայի վերաբերյալ իրենց անգնահատելի պատկերացումները:

Հայցում ենք ներողամտություն ցանկացած բացթողման համար և մեր անկեղծ շնորհակալությունն ենք հայտնում բոլորին, ովքեր սիրով նվիրեցին իրենց ժամանակը և փորձը:

Ամփոփագիր

Բոլոր երեխաների համար հավասար հնարավորություններ առաջարկող և որակյալ նախադպրոցական կրթության (ՆԴԿ) հասանելիությունն առանցքային նշանակություն ունի մարդկային ռեսուրսների զարգացման, գենդերային հավասարության և սոցիալական համերաշխության խթանման, ինչպես նաև նախատեսված կրթական արդյունքներին հասնելու համար նախատեսված լրացուցիչ վերականգնողական ծրագրերի ծախսերի կրճատման համար: Նախադպրոցական կրթությունը կարևորագույն նշանակություն ունի երեխայի սոցիալական, հուզական, ճանաչողական և ֆիզիկական կարիքների ամբողջական զարգացման համար՝ ցկյանս ուսումնառության և բարեկեցության կայուն և հուսալի հիմք ստեղծելու տեսանկյունից: Թեև Համաշխարհային բանկը Հայաստանը միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների շարքին է դասում, այստեղ դեռևս լուրջ մարտահրավերներ կան, որոնք խոչընդոտում են բոլոր երեխաների համար համընդհանուր, հավասար հնարավորություններ առաջարկող և որակյալ ՆԴԿ ծառայությունների մատուցումը: Քանի որ ներկայում այս ոլորտում բարեփոխումներ են իրականացվում, անհրաժեշտ է ունենալ համակարգային մոտեցման կիրառմամբ, հուսալի և ճշգրիտ տվյալների բազա՝ այս բարեփոխումների իրագործմանն աջակցելու նպատակով: Այսպիսով՝ նոր տվյալների բազայի ստեղծման նպատակով 2021 թվականի օգոստոսից 2022 թվականի փետրվար ժամանակահատվածում իրականացվել է նախադպրոցական կրթության համապարփակ ոլորտային վերլուծություն: Վերլուծությունը պատվիրակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ՀՀ ԿԳՄՍՆ) կողմից և իրականացվել ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեխնիկական աջակցությամբ՝ «Կրթության ոլորտի զարգացման ծրագիր» դրամաշնորհի շրջանակում, որը Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել Կրթության համաշխարհային գործընկերության հիմնադրամը:

Այս հետազոտության **նպատակն** է վերլուծել ՆԴԿ ենթաոլորտում առկա գործելակերպի հաջողություններն ու գերակա մարտահրավերները՝ կենտրոնանալով ենթաոլորտի միջավայրային առանցքային գործոնների՝ ՀՀ ԿԳՄՍՆ-ում առկա առաջնորդության և կառավարման կարողություն, ՆԴԿ ոլորտային քաղաքականության

և կանոնակարգման շրջանակ և հանրային պահանջարկ, ինչպես նաև վաղ մանկության կրթության (ՎՄԿ) չորս առանցքային գործառույթների վրա, մասնավորապես՝ (ա) պլանավորում, (բ) պետական չափորոշչի մշակում և կիրարկում, (գ) աշխատուժի զարգացում, (դ) ընտանիքի և համայնքի ներգրավվածություն: Հետազոտության **առաջնահերթ** խնդիրն է աջակցել ազգային շահագրգիռ կողմերին նախադպրոցական ենթաոլորտի ուժեղ կողմերը, բացթողումները, հիմնական մարտահրավերներն ու նոր հնարավորությունները բացահայտելու գործում՝ հաշվի առնելով մի շարք սկզբունքներ և համատեքստեր, մասնավորապես հավասարության, ներառականության և գենդերազգայունության սկզբունքները և ճգնաժամային իրավիճակների համատեքստը, ինչպես նաև քաղաքականության վերաբերյալ գործնականում կիրառելի և իրագործելի առաջարկներ ներկայացնել համապատասխան շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ ոլորտային նախարարություններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ), միջազգային զարգացման գործընկերներին (ՄԶԳ) ակադեմիական համայնքին ու ՆԴԿ հաստատություններին՝ նպաստելով համապարփակ ռազմավարությունների մշակմանը՝ ենթաոլորտի առանցքային խնդիրներին անդրադառնալու, ծառայությունների մատուցման գործընթացը բարելավելու և այդպիսով ՎՄԿ առանցքային գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու նպատակով: Հետազոտության երեք **առանցքային խնդիրներն** են. (i) բացահայտել Հայաստանի ՆԴԿ ոլորտում գրանցված առաջընթացը Հայաստանի բոլոր երեխաների համար համընդհանուր որակյալ ՆԴԿ ապահովելու հանձնառության համեմատ, (ii) բացահայտել, թե որքանով են Հայաստանում առկա միջավայրային գործոնները նպաստում կամ խանգարում ՎՄԿ-ի առանցքային գործառույթների իրագործմանը, և (iii) բացահայտել Հայաստանի նախադպրոցական կրթության ենթաոլորտի հիմնական ուժեղ կողմերը, բացթողումները, հիմնական մարտահրավերներն ու նոր հնարավորությունները՝ ՎՄԿ առանցքային գործառույթներն արդյունավետորեն իրագործելու և հավասարության ու խաղի վրա հիմնված ուսումնառության սկզբունքներն իրականացնելու համար:

Հետազոտությունն իրականացնելու համար կիրառվել է **խառը մեթոդների մեթոդաբանությունը**, որտեղ զուգակցվել են առկա

երկրորդային քանակական տվյալների ամփոփումն ու առաջնային տվյալների հավաքման որակական մեթոդը: Մեթոդաբանությունը մշակվել է Կրթության համաշխարհային գործընկերության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի «Վաղ մանկության կրթության կատալիզատորի համապարփակ գլոբալ մեթոդաբանության» տեղայնացման միջոցով, որը հիմնված է «Build to Last» հայեցակարգի վրա: Վերջինս հնարավորություն է ընձեռում վերհանելու և գնահատելու ՆԴԿ ոլորտի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև հիմնական մարտահրավերներն ու նոր հնարավորությունները: Հետազոտության տեխնիկական առաջադրանքի համաձայն՝ հետազոտական թիմը տեղայնացրել է վերը նշված մեթոդաբանությունը՝ գործիքակազմից ընտրելով ՎՄԿ տվյալների քարտեզագրման և փաստերի պլանը՝ փաստաթղթային վերլուծության ժամանակ հասանելի քանակական տվյալները քարտեզագրելու համար, և Նախադպրոցական ենթաոլորտի վերլուծության գործիքը՝ հետազոտական գործիքները մշակելու համար:

Համապարփակ **փաստաթղթային վերլուծություն** է իրականացվել ՆԴԿ ազգային համատեքստը վերլուծելու և ոլորտային քաղաքականության, կանոնակարգման և ինստիտուցիոնալ շրջանակը վերհանելու, ինչպես նաև Կառավարության՝ տվյալ ենթաոլորտի զարգացման համար բարենպաստ միջավայր ստեղծելու պատրաստակամությունը գնահատելու նպատակով: Անցկացվել է **20 առցանց ֆոկուս խմբի քննարկում** ՆԴԿ հաստատությունների տնօրենների և մանկավարժների, ծնողների և մարզպետարանների ներկայացուցիչների հետ, նաև **32 առցանց** հարցազրույց առանցքային տեղեկատուների և փորձագետների՝ **համապատասխան պետական գերատեսչությունների**, **ՏԻՄ-երի, ՔՀԿ-ների**, ՄԶԳ-ների, նախնական մասնագիտական կրթության և վերապատրաստման ծրագրեր առաջարկող կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև անկախ փորձագետների հետ՝ առաջնային տվյալներ հավաքելու նպատակով՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության էթիկական պահանջների և ՅՈՒՆԻՍԵՖ-ի ուղեցույցների: Ե՛վ առաջնային, և՛ երկրորդային տվյալների թեմատիկ վերլուծությունն իրականացվել է ըստ «Build to Last» հայեցակարգային շրջանակի և Վաղ մանկության կրթության կատալիզատորի գործիքակազմի:

Ըստ վերլուծության տվյալների՝ Հայաստանը որոշակի առաջընթաց է արձանագրել բոլոր երեխաների համար նախադպրոցական կրթության համընդհանուր հասանելիության ապահովման հարցում, քանի որ ՆԴԿ հաստատություններ ընդունվողների թիվը տարեցտարի աճում է: Սահմանվել են ՆԴԿ մակարդակում հավակնոտ նպատակներ, օրենսդրորեն ամրագրված է համընդհանուր ներառական կրթության ներդրումը, որոշակի քայլեր են ձեռնարկվել կրթության որակի բարելավման ուղղությամբ, օրինակ՝ պետական նոր չափորոշչի ընդունումը, այլընտրանքային, ծախսարդյունավետ ՆԴԿ ծառայությունների պարտադիր մատուցումը, ինչպես նաև ՆԴԿ հաստատությունների արտաքին և ներքին պարտադիր գնահատման ներմուծումը: Վերլուծելով ՆԴԿ ոլորտի զարգացման համար **բարենպաստ միջավայրի** երեք կատալիզատորները, այն է՝ ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից առաջնորդում, ոլորտային քաղաքականություն և օրենսդրություն, ինչպես նաև հանրային պահանջարկ՝ բարենպաստ միջավայրը կարելի է բնութագրել հետևյալ կերպ. առկա է հիմնարար, **անհրաժեշտ կանոնակարգման շրջանակ**, որը սահմանում է Հայաստանի ՆԴԿ ոլորտի **հավակնոտ նպատակները**:

Միևնույն ժամանակ բացակայում են **համապարփակ և միասնական գործողությունների ծրագիրը, մշտադիտարկման և գնահատման** համապատասխան **շրջանակը** և ավելի ամուր **ինստիտուցիոնալ կարողությունը,** որոնք կնպաստեին ՆԴԿ ոլորտի բարեփոխումների ավելի համընդհանուր իրագործմանն ու կանոնավոր գնահատմանը: Չնայած **ՆԴԿ ծառայությունների ոլորտում զգալի հանրային պահանջարկին**՝ ՆԴԿ հանրային ընկալումը դեռևս պետք է փոխակերպվի, որպեսզի կրթական ոլորտի ծառայությունները հանրային բարիք համարվեն, ինչն անհրաժեշտ է երեխայի ուսումնառության հետագա ձեռքբերումների առաջխաղացումն ապահովելու և ընդհանուր առմամբ կրթական համակարգն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Պլանավորման տեսանկյունից, ըստ վերլուծության տվյալների, Կառավարությունը կարծես թե հստակորեն ընդունում է կրթական շրջափուլում ՆԴԿ-ի կարևորությունը և գերակայություն է համարում այն: Ավելին՝ **հավասար հնարավորությունները, ներառականությունն ու հասանելիությունը** ՆԴԿ-ի առանցքային սկզբունքներ են հռչակվել: Այդուհանդերձ, ընթացիկ բարեփոխումների **կայունությունը**

և այլ մակարդակներում կրթական թիրախների հետ նրանց **համապատասխանությունը** ապահովելու համար Կառավարությունը պետք է հստակ թիրախներ սահմանի և ֆինանսավորում տրամադրի հռչակված ՆԴԿ՝ ՎՄԿ առանցքային գործառույթներին վերաբերող նպատակների իրականացման համար: ՆԴԿ ծառայությունների **մատչելիության ու հասանելիության** ապահովմանն ուղղված պլանավորման գերակայությունները ներառում են ամբողջ երկրում ՆԴԿ հաստատությունների ցանցի ընդլայնումը, ՆԴԿ ծառայությունների բազմազանեցումը, ինչպես նաև համընդհանուր ներառական կրթությունն ու կաշառակերության վերափոխումը: Այնուամենայնիվ, այս գերակայությունների արդյունավետ իրագործմանն օժանդակելու համար **խիստ անհրաժեշտ** են մասնակցային և փաստահենք քաղաքականության ձևավորումը և որոշումների կայացման գործընթացը, թիրախային մարզային և տեղական ոլորտային քաղաքականությունները, որակի ապահովման, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները, տարբեր մակարդակներում ինստիտուցիոնալ համագործակցության բարելավումը, հետևողական և արդյունավետ

© UNICEF Armenia/2021/Մարգարյան

հաղորդակցությունը շահագրգիռ կողմերի և շահառուների տարատեսակ խմբերի հետ, ինչպես նաև փաստահենք բյուջետավարումը:

Դեռևս վաղ է քննարկել **չափորոշչի մշակման և կիրարկման** առկախված հարցը: Այդուհանդերձ, դրա արդյունավետ իրագործումն ապահովելու համար պետք է ուշադրություն դարձնել որոշակի հնարավոր ռիսկերին, ինչպիսիք են, օրինակ, նոր չափորոշչի վերաբերյալ իրազեկման ցածր մակարդակը, չափորոշչի նպատակների և որոշ գաղափարների վերաբերյալ թյուրըմբռնումներն ու խառնաշփոթը առանցքային շահագրգիռ կողմերի շրջանում, նաև մանկավարժների՝ չափորոշչի

պահանջներն իրականացնելու անբավարար կարողությունները:

Աշխատուժի զարգացման առումով ՆԴԿ աշխատուժի հավաքման և տվյալ ոլորտում պահման գործընթացը դեռևս խթանվում են համապատասխան կանոնակարգող դաշտի ուժով, թեև ՀՀ ԿԳՄՍՆ-ն ներկայում վերանայում է ողջ քաղաքականությունը: Աշխատակիցներ հավաքելու և տվյալ ոլորտում նրանց պահելու հարցում ամենամեծ խնդիրներն են ՆԴԿ դասավանդման գրավչության բացակայությունը և սոցիալական ու մասնագիտական անբավարար աջակցությունը: Նախնական կրթությունը և վերապատրաստումը, ինչպես նաև ՇՄԶ հնարավորությունները թեև առկա են, բայց հավասարապես հասանելի չեն ՆԴԿ մանկավարժներին, հատկապես թվային սահմանափակ գիտելիքներ ունեցող ավագ սերնդի ներկայացուցիչներին և մարզաբնակներին: Ավելին՝ դրանց որակը մշտադիտարկման չի ենթարկվում, որպեսզի ապահովվի կրթական և վերապատրաստման ծրագրերի փաստահենք բնույթը: Նոր հնարավորությունների շարքում կարելի է նշել Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ) և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) համապատասխան նոր նախաձեռնությունները, ինչպես նաև մի շարք նոր գործելակարգեր, ինչպիսիք են, օրինակ, ՔՈՎԻԴ-19 համավարակի ընթացքում տարածում գտած առցանց ուսուցման հնարավորությունները և մասնավոր դերակատարների կողմից մատուցվող որակյալ վերապատրաստումը: Այս հնարավորությունների արդյունավետ կիրառումը կնպաստի ՇՄԶ ծրագրերի որակի և հասանելիության բարելավմանը:

Ընտանիքի և համայնքի ներգրավվածության առումով ընտանիքի ներգրավվածությունը հիմնականում կենտրոնանում է հաշվետվողականության և ՆԴԿ կառուցվածքային որակի խնդիրների վրա, թեև ներգրավվածության մեխանիզմները կարող են տարբեր լինել, հատկապես ՔՈՎԻԴ-19 համավարակի ընթացքում սոցիալական մեդիայի օգտագործման տարածմանը զուգընթաց: Համայնքային ներգրավվածությունը բավական հայեցողական բնույթ ունի, քանի որ ՆԴԿ, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բացակայում է ամբողջական երեխայակենտրոն ծառայությունների մատուցման մշակույթը: ՆԴԿ հաստատությունները համակարգային, հետևողական կերպով չեն աջակցում

ընտանիքներին տնային ուսուցման դրական միջավայրի խթանման հարցում:

Ի վերջո, ծնողները և տարրական դպրոցի ուսուցիչները համոզված են, որ ներկայում ՆԴԿ-ն ավելի լավ է նախապատրաստում երեխաներին տարրական դպրոցին, ու ՆԴԿ հաստատություններում ընդգրկված երեխաները հատուկ կարողություններ են ձեռք բերում, ինչը դյուրացնում է նրանց **անցումը դպրոցին**: Այդուհանդերձ, կա նաև աճող միտում, հատկապես մասնավոր ՆԴԿ հաստատություններում. պետական չափորոշչի շրջանակներից դուրս կենտրոնանում են տառերը և թվերը սովորելու վրա, ինչը խոչընդոտում է ՆԴԿ հաստատությունների և տարրական դպրոցի ավելի արդյունավետ համապատասխանեցումը:

Հիմնվելով այս եզրակացությունների վրա՝ ՆԴԿ ոլորտի յուրաքանչյուր առանցքային դերակատարի համար ներկայացվում են **հանձնարարականներ**՝ ՎՄԿ հիմնական գործառույթներից յուրաքանչյուրի կիրարկումը և ընդհանուր բարենպաստ միջավայրը բարելավելու նպատակով: Հանձնարարականներում նախանշվում են առանցքային արդյունքները, միջամտության հրատապության աստիճանը և հնարավորության դեպքում արդյունքների վավերացման նպատակով անցկացված աշխատաժողովի տեսանկյունները:

Բարենպաստ միջավայր

Նախարարության առաջնորդում

Զարգացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության ինստիտուցիոնալ կարողությունները ՆԴԿ ոլորտում քաղաքականության մշակման, մշտադիտարկման և քաղաքացիների հետ հաղորդակցության բնագավառում. (ա) աշխատանքի ընդունելով վաղ մանկության կրթության, մշտադիտարկման և գնահատման ոլորտում փորձ ունեցող ավելի մեծ թվով աշխատակիցների, նաև քաղաքացիների հետ հաղորդակցության համար պատասխանատու աշխատակիցների և (բ) մշակելով մշտադիտարկման և գնահատման համապարփակ շրջանակ և գործիքակազմ՝ նախանշված նպատակների համեմատ ընդունված ՆԴԿ քաղաքականությունների արդյունավետությունը մշտադիտարկելու և գնահատելու նպատակով:

Ոլորտային քաղաքականություն և օրենսդրություն

Մշակել համապարփակ, փոխկապակցված և ծախսահաշվարկ պարունակող

գործողությունների ծրագիր՝ հստակ թիրախներով ու առանձնացված ֆինանսավորմամբ, ՆԴԿ հավակնոտ նպատակների իրականացման համար:

Համապատասխանեցնել ՆԴԿ ոլորտում հավակնոտ նպատակների իրականացումը ոչ միայն հանրային պահանջարկին, այլև մասնագիտական համայնքի, հատկապես ՆԴԿ ծառայություններ մատուցող աշխատուժի կողմից որպես առաջնահերթություն ընկալվող խնդիրներին. (ա) ներդնելով հետևողական, ներառական, մասնակցային և հասանելի խորհրդատվական հետադարձ կապի մեխանիզմներ, (բ) քաղաքականության և ընթացակարգային փոփոխություններում ներառելով համապարփակ պիլոտային փուլեր, (գ) հաշվի առնելով նոր քաղաքականությունների և ընթացակարգերի ներդրման համար առավել նպաստավոր ժամանակահատվածը և արագությունը:

Սերտորեն համագործակցելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՀՀ ՏԿԵՆ) հետ և ՔՀԿ-ների և ՄՁԳ-ների օժանդակությամբ աջակցել մարզպետարաններին և ՏԻՄ-երին հետևյալում. (ա) զարգացնել կարողությունները տվյալների հավաքման և օգտագործման ոլորտում, ինչպիսիք են համապատասխանեցված կարիքների գնահատման և մշտադիտարկման մեխանիզմները, (բ) բացահայտել ինքնուրույն որոշումների կայացման գործընթացի կանոնակարգային խոչընդոտները, (գ) տարածել ՆԴԿ ծառայությունների տրամադրման վերաբերյալ մարզային և տեղական մակարդակով որոշումների կայացման գործընթացում հաջողված պատմությունների մոտեցումները և (դ) մշակել վերահսկողության արդյունավետ մեթոդաբանություններ, որպեսզի դրանք ՆԴԿ հաստատություններին օգնեն բարելավելու ծառայությունների մատուցման գործընթացը (միայն ՏԻՄ-երի դեպքում):

Սերտորեն համագործակցելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (ԱՍՀ) և առողջապահության նախարարությունների հետ՝ մշակել հստակ և օգտագործողին հարմար (խուսափելով իրավաբանական լեզվից) ուղեցույց քաղաքացիների համար՝ սահմանելով պետական յուրաքանչյուր գործակալության դերն ու պարտականությունները ՆԴԿ ծառայությունների մատուցման գործընթացում նրանց գործառույթների վերաբերյալ,

© UNICEF Armenia/2021/Մահարի

ինչն ավելի դյուրին կդարձնի քաղաքացիների և պետական մարմինների հաղորդակցությունը:

Ազգային քաղաքականություններին զուգահեռ և դրանց համապատասխան՝ ավելի թիրախային քաղաքականություններ և ընթացակարգեր մշակել, որոնք կանդրադառնան ՆԴԿ ծառայությունների հանրային պահանջարկի նոր միտումներին և տեղական ու մարզային մակարդակներում առկա մարտահրավերներին՝ հաշվի առնելով ՆԴԿ կարիքների բազմազանությունը գյուղական/քաղաքային բնակավայրերում:

Պետական յուրաքանչյուր գործակալության դերի և պարտականությունների վերաբերյալ վերոհիշյալ ուղեցույցը ընդունել տեղական ու մարզային մակարդակներում՝ նշելով մարզային և տեղական անհրաժեշտ տվյալները:

Հանրային պահանջարկ

Ամբողջ երկրում ՆԴԿ հաստատությունների ցանցի ընդլայնմանը զուգահեռ, սերտորեն համագործակցելով ՄՁԳ-ների հետ. (ա) խրախուսել ՆԴԿ ծառայությունների մատուցման ավելի բազմազան մոդելների ներդրումը ճկուն կանոնակարգերի ընդունման և թիրախային բյուջեով ծրագրի մշակման միջոցով և (բ) վերլուծել տարբեր ժամերին ավելի ճկուն ծառայությունների տրամադրմանը նպաստող և խանգարող գործոնները և ընդունել ընտանիքներին աջակցող, փաստերից բխող քաղաքականություններ:

Պլանավորում

Շահերի պաշտպանություն և հաղորդակցություն

Սերտորեն համագործակցելով փորձագետների համայնքի և լրատվամիջոցների հետ, խորհրդակցելով առանցքային շահագրգիռ կողմերի և շահառուների հետ՝ մշակել և իրագործել հաղորդակցության ռազմավարական պլան՝ ՆԴԿ-ի կարևորության ընկալմանը նպաստելու և տվյալ ոլորտում ընթացող լայնածավալ բարեփոխումների ընթացքը դյուրացնելու նպատակով:

Հանրային ընկալումները վերափոխելու, բարեփոխումների նկատմամբ դիմադրությունը նվազեցնելու և հանրային աջակցությունը մոբիլիզացնելու համար այդ պլանի առանցքային թեմաները պետք է լինեն. (ա) ՆԴԿ-ի կարևորությունը երեխայի զարգացման և կրթության հարցում. որպես հանրային բարիք՝ պետք է ընդգծվի դրա դերը երեխայի կյանքում և կրթության բնագավառում հետագա հաջողության հասնելու հարցում ու դրա ներդրումը հասարակության բարեկեցության գործում, (բ) քաղաքականության և օրենսդրության բոլոր փոփոխությունների և, ամենակարևորը, պետական նոր չափորոշչի դերն ու նշանակությունը. ինչպիսի խնդիրների են անդրադառնալու այս փոփոխությունները, (գ) ՆԴԿ բարեփոխումների իրագործելիությունը, մասնավորապես՝ ինչպես են հարթվելու շահագրգիռ կողմերի և շահառուների բարձրաձայնած սահմանափակումներն ու խնդիրները, (դ) ներառական կրթությունը և (ե) ՆԴԿ ծառայությունների մատուցման որակը: ՆԴԿ շահառուները պետք է ընդգրկվեն այս հաղորդակցության ռազմավարական պլանի իրականացման գործընթացում որպես ՆԴԿ-ի հաջողված պրակտիկայի մասին կարևոր

ուղերձներ հանրայնացնող դերակատարներ:

Շահերի պաշտպանությանն ու իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործողությունները համապատասխանեցնել հաղորդակցության ռազմավարական պլանին:

Որոշումների կայացման մասնակցային գործընթաց

Ապահովել որոշումների կայացման մասնակցային և ներառական գործընթացը՝ (ա) ԿՀՆԱԿ-ի և ԿՏԱԿ-ի աջակցությամբ մշակելով ճշգրիտ և հստակ ուղեցույց խորհրդատվական գործընթացի վերաբերյալ, որը կներառի խորհրդատվական հնարավորությունների հիմնավորումը և տեսակները և որոշումների կայացման գործընթացում ներգրավվելու առկա մեխանիզմները (օրինակ՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը՝ e-draft, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում կամ ԿՀՆԱԿ-ում աշխատանքային հանդիպումները, ՔՀԿ-ների կազմակերպած որոշ հանրային միջոցառումները և հետադարձ կապի օղակը), բայց չի սահմանափակվի դրանցով, (բ) պարբերաբար և նախօրոք հրապարակելով նախատեսվող խորհրդակցությունների գրաֆիկները, որպեսզի հնարավոր դառնա ՆԴԿ աշխատուժի, հատկապես մարզաբնակ աշխատակիցների մասնակցությունը, և (գ) հստակեցնելով, թե ինչպիսի արձագանք են ստանում քաղաքացիների և ՆԴԿ աշխատուժի ու փորձագիտական համայնքի ներկայացրած առաջարկները, դիտարկումներն ու տեսակետները՝ բացատրելով հետադարձ կապի օղակի էությունը հանրային ելույթներում և խորհրդատվական ուղեցույցներում:

Ավելի պրոակտիվ լինել ՆԴԿ ծառայություններ տրամադրող մասնավոր հաստատությունների, հատկապես Մասնավոր մանկապարտեզների ասոցիացիայի հետ հարաբերություններում, որպեսզի հնարավոր լինի առաջարկել համապատասխանեցված, փաստերի վրա հիմնված քաղաքականության լուծումներ՝ (ա) ներկայացնելով համապատասխան ողջ տեղեկատվությունը քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ, (բ) հրավիրելով նրանց մասնակցելու պլանավորված խորհրդակցություններին, և (գ) ծանոթանալով նրանց՝ փաստերի վրա հիմնված տեսակետներին քաղաքականության և ընթացակարգերի նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ:

Հաղորդակցվել համայնքի անդամների հետ մասնակցային մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են ավագանու խորհրդի նիստերը, հանրային քննարկումները, խորհրդակցական հանդիպումները՝ համայնքում առաջնահերթ վերանորոգման ենթակա ՆԴԿ հաստատությունների ցանկը կազմելու և այլ համայնքահենք ՆԴԿ խնդիրներին արձագանքելու նպատակով:

Որակի ապահովում

Խորհրդակցելով համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ ուսումնասիրել տեսչական մարմինների մանդատների ընդլայնման հնարավորությունը՝ այդ մանդատների շրջանակում խորհրդատվական գործառույթի հնարավորություն ընձեռելու նպատակով՝ նպաստելու համար ՆԴԿ հաստատություններում խախտումների կանխարգելմանը. (ա) անցկացնելով ՀՀ կրթության տեսչական մարմնի և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնակարգային և ինստիտուցիոնալ շրջանակների համապարփակ վերլուծություն՝ վերհանելով խորհրդատվական գործառույթի ներդրմանը նպաստող գործոնները և բացերը, (բ) մշակելով խորհրդատվության ապահովման համապատասխան ընթացակարգ և (գ) հավաքագրելով անհրաժեշտ փորձառություն ունեցող աշխատակիցների:

Առանցքային նպաստավոր գործոններն ու մարտահրավերները բացահայտելու, նաև քաղաքականության և ընթացակարգերի՝ փաստերից բխող վերանայումն իրականացնելու համար մշակել մշտադիտարկման և գնահատման համապարփակ մեթոդաբանություններ՝ հետևյալի արդյունավետությունը վերլուծելու նպատակով. (ա) կիրառվելիք ֆինանսավորման նոր մեխանիզմ (մեկ սանի հաշվարկով ֆինանսավորում)՝ ՆԴԿ հաստատությունների համար պետական ֆինանսավորում ապահովելու համար, (բ) պետական դրամաշնորհների տրամադրում՝ ՆԴԿ ծառայությունների մատուցման այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ստեղծման համար և (գ) ՆԴԿ հաստատությունների ներքին և արտաքին գնահատման նոր պրակտիկա:

ՆԴԿ ծառայությունների մատուցման այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրմանը նպաստելու համար. (ա) վերլուծել ՆԴԿ այլընտրանքային, ծախսարդյունավետ ծառայությունների ներդրմանն ուղղված պետական ֆինանսավորման մասին առաջին հայտարարության ընթացքն ու

արդյունքները և (բ) հիմնվելով վերլուծության արդյունքների վրա՝ համայնքների համար մշակել հայտերի ներկայացման մանրամասն ուղեցույց և աջակցության մեխանիզմ մինչև պետական դրամաշնորհներ ստանալու համար հայտադիմումներ ներկայացնելու հաջորդ փուլը:

Որակի ապահովման չափորոշիչների ներդրման եղանակով մշակել հստակ մեխանիզմներ փորձագիտական կարողությունների որակի ապահովման համար, որը երաշխավորվում է պետական ֆինանսավորման օգտագործման միջոցով:

Վերլուծել համայնքների խոշորացման ազդեցությունը խոշորացված համայնքներում 2023 թվականի ՆԴԿ ծառայությունների մատուցման գործընթացի վրա՝ ԿԳՄՍ նախարարության հետ սերտ համագործակցությամբ մշակելով պետական քաղաքականության ազդեցության վերլուծության համապարփակ մեթոդաբանություն:

Անհրաժեշտ փորձագիտական կարողությունները ներգրավելու նպատակով մշակել հստակ և թափանցիկ մեխանիզմներ՝ հետևյալը մշակելու համար. (ա) պետական չափորոշչի կիրարկման ուղեցույցներ, (բ) ՆԴԿ դասավանդման և ուսումնական ռեսուրսներ, հատկապես խաղի վրա հիմնված ուսումնառության մեթոդաբանությունների կիրառման վերաբերյալ ձեռնարկ ՆԴԿ մանկավարժների համար և (գ) որակի ապահովման չափորոշիչներ և ցուցիչներ ՇՄԶ ծրագրերի համար:

Սերտորեն համագործակցելով ԿԶՆԱԿ-ի հետ՝ կանոնակարգային համապատասխան փոփոխությունների առկայության դեպքում տեսչական գործիքակազմում ներառել գործընթացային որակի ավելի շատ ցուցիչներ:

ՔՀԿ-ների և ՄԶԳ-ների աջակցությամբ. (ա) մշակել և լայնորեն տարածել ընդունելության նոր ընթացակարգի պահանջներին համապատասխան ՆԴԿ հաստատություն երեխաների ընդունելության վերաբերյալ հստակ և օգտագործողին հարմար ուղեցույցներ և՛ ՆԴԿ հաստատությունների ղեկավարության, և՛ ծնողների համար, (բ) զարգացնել համապատասխան աշխատակիցների՝ ՆԴԿ ծառայությունների տրամադրումը վերահսկելու կարողությունները և (գ) ստեղծել վերահսկողության մեխանիզմ ծնողների և տարրական դպրոցների ու ՏԻՄ-երի ներկայացուցիչների ներգրավման միջոցով՝ երաշխավորելու համար այլընտրանքային ՆԴԿ

ծառայությունների մատուցման որակը:

Համատեղ ֆինանսավորել փոխարինող մանկավարժի հաստիքը թաղամասի մի շարք ՆԴԿ հաստատությունների համար՝ ծառայությունների շարունակական տրամադրումը և ՇՄԶ ծրագրերում մանկավարժների որակյալ մասնակցությունն ապահովելու նպատակով:

Պաշտոնական վիճակագրություն և Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ (ԿԿՏՀ)

Մշակել ՆԴԿ-ին վերաբերող մետատվյալների հստակ սահմանումներ՝ քաղաքականության մշակման և տվյալների ստացման նպատակներով պաշտոնական վիճակագրության օգտագործումը դյուրացնելուհամար:

Ավելի հաճախ խորհրդատվություն տրամադրել պաշտոնական վիճակագրական տվյալների հավաքման համար պատասխանատու մարմիններին «Պետական վիճակագրության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Սերտորեն համագործակցելով ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ ՏԿԵ, ԱՍՀ և առողջապահության նախարարությունների հետ՝ համակարգել, ամրապնդել և զարգացնել տվյալների փոխանակման մեխանիզմները համապարփակ ԿԿՏՀ-ի մշակումն ապահովելու նպատակով՝ ակտիվորեն ներգրավելով ԿՏԱԿ-ը, ԿԶՆԱԿ-ը և հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը համակարգմանը վերաբերող համապարփակ տեխնիկական առաջադրանքի կազմման գործընթացում:

Ապահովել ՆԴԿ հաստատությունների անհրաժեշտ տեխնիկական կարողությունների առկայությունը, այդ թվում՝ համակարգիչները և համացանցին միացումը, որպեսզի ապահովվի ԿԿՏՀ-ի և վարչական ռեգիստրի համար ՆԴԿ հաստատությունների վերաբերյալ ճշգրիտ տվյալների հավաքումը՝ տեխնիկական աջակցություն ներգրավելով մասնավոր հատվածից և ՄԶԳ-ներից:

Ապահովել համապատասխան վերապատրաստում ՆԴԿ հաստատության՝ ԿԿՏՀ-ի համար անհրաժեշտ տվյալների հավաքման նպատակով պատասխանատու աշխատակիցների համար:

Ապահովել աջակցության համակարգի առկայությունը՝ ճշգրիտ տվյալներ հավաքելու նպատակով ավելի մեծ թվով աշխատակիցներ աշխատանքի ընդունելով:

Սերտորեն համագործակցելով մանկավարժահոգեբանական կենտրոնների և ՆԴԿ հաստատությունների հետ՝ մշակել ավելի համապարփակ դիսագրեգացված տվյալներ ՆԴԿ մակարդակում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների վերաբերյալ և տվյալներ այն ՆԴԿ հաստատությունների մասին, որոնք խելամիտ հարմարեցումներ են կատարել ներառական ՆԴԿ ծառայություններ ապահովելու նպատակով:

Ընդունել/նշանակել ԿԿՏՀ տվյալների հավաքման համար պատասխանատու հատուկ աշխատակից:

Ներառականություն և հավասար հնարավորություններ

Սերտորեն համագործակցելով ՄՁԳ-ների և ՔՀԿ-ների հետ. (ա) գնահատել առանցքային դերակատարների, հատկապես հանրապետական և մարզային տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների և ՆԴԿ հաստատությունների ինստիտուցիոնալ կարողություններն ու կարիքները գործողությունների ծրագրի իրականացման գործում, (բ) բավարարել տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների և ՆԴԿ հաստատությունների առաջնահերթ կարիքները՝ աջակցելով նրանց գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացման գործում, (գ) սերտորեն համագործակցելով ՀՀ ԱՍՀ նախարարության հետ՝ հստակեցնել միասնական սոցիալական ծառայության դերը ՆԴԿ հաստատություններում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ընդունմանը նպաստելու հարցում, (դ) մշակել գնահատման համապարփակ մեխանիզմ՝ ՆԴԿ հաստատություններում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ընդունման համար լրացուցիչ ֆինանսավորման կիրառման արդյունավետությունը գնահատելու համար և (ե) համագործակցելով ԿՁՆԱԿ-ի և հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ՝ մշակել լավ համակարգված, կանոնավոր հետադարձ կապի մեխանիզմ ներառական պրակտիկայի վերաբերյալ՝ առանցքային շահառուներից անմիջապես հետադարձ կապ ապահովելու համար, որը և ցույց կտա գործողությունների ծրագրի իրականացման ընթացքը:

Սերտորեն համագործակցելով ՀՀ ԱՍՀ և առողջապահության նախարարությունների

հետ՝ մշակել ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ հստակ և օգտագործողին հարմար ուղեցույցներ՝ կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաներին միասնական ծառայություններ տրամադրելու համար:

Սերտորեն համագործակցելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ՝ մշակել հատուկ ֆինանսավորման մեխանիզմ, որպեսզի ապահովվի հատուկ խնամքի հաստատություններում (մանկատներում) գտնվող երեխաների, հատկապես 5-6 տարեկան երեխաների ներգրավումը ՆԴԿ-ում. (ա) հավելյալ ֆինանսավորում ապահովելով մոտակա ՆԴԿ հաստատությանը՝ խնամք իրականացնող հաստատությունում կանոնավոր կերպով ՆԴԿ տրամադրելու նպատակով, (բ) տեղափոխման վճար ապահովելով հատուկ խնամքի հաստատություններին, որպեսզի ապահովվի երեխաների համար ՆԴԿ հաստատության հասանելիությունը, (գ) խթաններ, օրինակ՝ հարկային արտոնություններ առաջարկելով մասնավոր դերակատարներին հատուկ խնամքի հաստատություններում գտնվող առնվազն 5-6 տարեկան երեխաների՝ մոտակա նախակրթարաններում ընդունելությանն աջակցելու դիմաց:

Հաշվի առնել դպրոցների մակարդակում համընդհանուր ներառական կրթության ներմուծումից և ՆԴԿ մակարդակում համընդհանուր ներառականության սկզբունքի ներդրման փոքրածավալ նախաձեռնություններից քաղված դասերը, այդ թվում՝ ենթակառուցվածքների և կրթական ռեսուրսների առկայությանը, կարողությունների զարգացմանը և բարեփոխումների վերաբերյալ հաղորդակցությանը վերաբերող տեղեկատվությունը, նաև ուղեցույց առաջարկել ՆԴԿ հաստատություններին և ընտանիքներին ՆԴԿ մակարդակում համընդհանուր ներառական կրթության ներդրման վերաբերյալ:

Սերտորեն համագործակցելով ԿԶՆԱԿ-ի, ՔՀԿ-ների և ՄՀԳ-ների հետ՝ մոբիլիզացնել մանկավարժների/դասընթացավարների վերապատրաստման դասընթացների և նախնական կրթության ակադեմիական ծրագրերի/դասընթացների մշակման ոլորտում առկա փորձագիտական գիտելիքը՝ մանկավարժների վերապատրաստման համապարփակ դասընթաց մշակելու նպատակով, որը կպարունակի մենթորական բաղադրիչ և կունենա ամբողջ երկրում դասընթացն անցկացնելու հստակ ժամանակացույց :

Աջակցել ՆԴԿ հաստատություններին կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ընդունելությանը նպաստելու համար խելամիտ հարմարեցումներ կատարելու գործընթացում՝ ներառելով առաջարկներ երեխայի ուսումնական պլանում խելամիտ փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Սերտորեն համագործակցելով ԿՁՆԱԿ-ի հետ՝ մշակել մշտադիտարկման համակարգ, ներառյալ համընդհանուր ներառական ՆԴԿ-ին անցման առաջընթացի գնահատման մեթոդաբանությունն ու գործիքակազմը:

ՔՀԿ-ների և ՆԴԿ հաստատությունների աջակցությամբ մոբիլիզացնել համայնքային ռեսուրսները, օրինակ՝ առանձին հիմնադրամ ստեղծելով համընդհանուր ներառական կրթության իրագործմանը ֆինանսապես աջակցելու նպատակով, տարածելով արդեն առկա լավագույն փորձառությունը:

Մոբիլիզացնել համայնքի դպրոցներին ցուցաբերվող աջակցությունը՝ ՆԴԿ մակարդակում համընդհանուր ներառական կրթություն ներդնելու նպատակով: ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ խորհրդակցելով, օրինակ, լրացուցիչ ֆինանսական միջոցներ հատկացնել՝ ներգրավելու հատուկ մանկավարժների, խոսքի զարգացման մասնագետների, հոգեբանների և այլ անհրաժեշտ մասնագետների՝ ՆԴԿ հաստատություններում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաներին աջակցություն ապահովելու նպատակով:

Գնահատել ՆԴԿ հաստատությունների՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված երեխաների ինտեգրմանն ուղղված հայեցողական ջանքերի արդյունավետությունը և, հիմնվելով արդյունքների վրա, հավելյալ միջոցներ հատկացնել հաջողված պրակտիկան տարածելու համար:

Համագործակցելով մարզպետարանների հետ՝ ՆԴԿ հաստատություններում այս երեխաներին հոգեբանական աջակցության հասանելիություն ապահովել:

Չափորոշչի մշակում և կիրարկում

Համագործակցելով ԿՁՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և ՄՁԳ-ների, նաև մարզպետարանների ու ՏԻՄ-երի հետ՝ (ա) մշակել համապարփակ գործողությունների ծրագիր պետական նոր չափորոշչի կիրարկման համար, ներառյալ առանցքային նպաստող

գործոնների ու մարտահրավերների քարտեզագրումը և մշտադիտարկման ու գնահատման համապարփակ շրջանակը, (բ) համագործակցելով մարզպետարանների և ՏԻՄ-երի հետ՝ մշակել պետական նոր չափորոշչի տարածման համապարփակ ռազմավարություն, ներառյալ ՆԴԿ ոլորտում աշխատող անձանց համար ազգային խորհրդատվական մի շարք հանդիպումների կազմակերպումը՝ նրանց հարցերին անդրադառնալու նպատակով և (գ) մշակել տեխնիկական առաջադրանք և փաստերից բխող մեթոդաբանություն՝ նոր չափորոշչի գալիք փորձարկման համար:

Մշակել մանկավարժների համար պետական նոր չափորոշչի կիրառման վերաբերյալ ձեռնարկ և ՆԴԿ մակարդակում խաղի վրա հիմնված ուսումնառության կիրառման վերաբերյալ համապարփակ ուղեցույց:

Մշակել ուսումնական նյութեր և առաջարկել խորհրդատվություն՝ կարողունակությունների վրա հիմնված չափորոշչի և մանկահասակ երեխաների շրջանում դասավանդման և ուսումնառության վրա դրա հետևանքների վերաբերյալ ընդհանուր ընկալում ձևավորելու հարցում ՆԴԿ մանկավարժներին աջակցելու նպատակով:

ԿՏԱԿ-ի հետ համագործակցելով՝ մշակել և ակտիվորեն շահագործել հարթակ՝ ներկայացնելու նոր չափորոշչի կիրարկման ընթացքում հաջողված պատմություններն ու մարտահրավերները՝ իրականացման գործընթացն ավելի արդյունավետ կառավարելու, ինչպես նաև հետագա վերանայման համար հուսալի տվյալներ ստանալու նպատակով:

Նոր չափորոշչի կիրարկման մշտադիտարկման գործընթացում ներառել մասնավոր ՆԴԿ հաստատությունները, որպեսզի ապահովվի նրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին:

Աշխատուժի զարգացում

Մանկավարժների հավաքագրում և պահում ոլորտում

ԿԶՆԱԿ-ի հետ համատեղ վերանայել ՆԴԿ մանկավարժական անձնակազմի որակավորման շրջանակը և հստակեցնել առանցքային կարողությունները՝ նոր չափորոշչի պահանջներին համապատասխան:

ՆԴԿ մանկավարժների պակասի խնդիրը լուծելու համար. (ա) ՏԻՄ-երի հետ համատեղ գնահատել մանկավարժական աշխատուժի պակասը և ամեն տարի ավելացնել ՆԴԿ մանկավարժների որակավորման

պետական քվոտաները՝ այդպիսով խրախուսելով երիտասարդ շրջանավարտներին ընտրել ՆԴԿ դասավանդման ծրագրերը, (բ) սահմանել մեխանիզմներ, որոնք արտացոլում են ՆԴԿ մանկավարժի կատարողականի և նրա վարձատրության կապը՝ մանկավարժին ոլորտում պահելու նպատակով: Քանի որ ներկայում ՀՀ ԿԳՄՍՆ-ն նման մեխանիզմ է մշակում, կարևոր է անցկացնել խորհրդատվություններ և նախագծել պիլոտային փուլ՝ տվյալ մեխանիզմի արդյունավետությունը գնահատելու համար:

Մշակել ՆԴԿ մանկավարժի կատարողականի հստակ ցուցիչներ, ներառյալ խնամքի ցուցիչներ (համարվել է գերակայություն արդյունքների վավերացման նպատակով անցկացված հանդիպման ժամանակ):

Անցկացնել համատեղ մասնագիտական կողմնորոշիչ հանդիպումներ՝ խրախուսելով շրջանավարտներին դիմել ՆԴԿ որակավորման ծրագրերին:

Մշակել համապատասխանեցված մեխանիզմներ իրենց համայնքներում ՆԴԿ մանկավարժներ հավաքագրելու նպատակով, օրինակ՝ ֆինանսավորել համայնքի որևէ անդամի վերապատրաստումը ՆԴԿ մանկավարժի աշխատանքի համար՝ այն պայմանով, որ նա որոշակի ժամանակահատվածում ՆԴԿ հաստատությունում կաշխատի:

Նախնական կրթություն և վերապատրաստում

Շարունակել տրամադրվող ՎՄԿ ծրագրերի բարելավմանն ուղղված իրենց ջանքերը. (ա) ներմուծելով համապատասխան դասընթացներ, որոնք բավարարում են կարիքները՝ պետական նոր չափորոշչին, հատկապես խաղի վրա հիմնված ուսումնառության մեթոդաբանություններին համապատասխան, (բ) առաջարկելով ընտանիքների և համայնքների հետ համագործակցության ռազմավարություններ, ինչպես նաև ծնողներին և մանկահասակ երեխաներին մեդիագրագիտության և ֆինանսական գրագիտության հիմունքներին ծանոթացնող մեթոդաբանություններ, (գ) գործնական աշխատանքի նախագծման և իրականացման բարելավման միջոցով և (դ) ՆԴԿ մանկավարժների որակավորման առցանց դասընթացների մշակման և անցկացման միջոցով:

ՇՄԶ

ԿԶՆԱԿ-ի և ԿՏԱԿ-ի հետ համատեղ ձևավորել օգտագործողին հարմար, հասանելի հարթակ (հավանաբար որպես բոլոր մակարդակների մանկավարժների ՇՄԶ–ին

ուղղված ավելի համապարփակ հարթակի մաս), որտեղ ՇՄԶ հնարավորությունների մասին տեղեկատվություն է զետեղված: Այն ՆԴԿ մանկավարժների համար ավելի հասանելի կդարձնի վերապատրաստման որակյալ դասընթացների հնարավորությունների մասին տեղեկատվությունը, ներառյալ վերապատրաստող կազմակերպությունների տվյալները, վերապատրաստման դասընթացների նկարագրությունը և թիրախային լսարանը:

ԿԶՆԱԿ-ի հետ համատեղ, համագործակցելով ՔՀԿ-ների և ՄԶԳ-ների հետ, կազմել համապարփակ տեխնիկական առաջադրանք ՇՄԶ ծրագրերի նախագծման համար՝ հարմարեցնելով հանրակրթական հաջորդ մակարդակի հաջողված քաղաքականություններն ու պրակտիկան, ինչպես նաև մշտադիտարկման համապատասխան գործիքները՝ ՇՄԶ ծառայությունների մատակարարման որակն ապահովելու նպատակով: Տեխնիկական առաջադրանքը պետք է. (ա) ներառի կարիքների գնահատում՝ որպես վերապատրաստման կառուցվածքի մաս, (բ) կենտրոնանա բարձրաձայնված կարիքների վրա, ինչպիսիք են. (i) կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու մեթոդաբանություններ, (ii) երեխաների հոգեբանություն և տարիքին բնորոշ առանձնահատկություններ, (iii) դժվար վարքագծի հաղթահարում, (iv) խաղի վրա հիմնված ուսումնառության մեթոդաբանություններ, (v) ՆԴԿ կանոնակարգային շրջանակի մեկնաբանում և գործնական հետևանքներ, (vi) անհրաժեշտ փաստաթղթավարություն, (vii) աշխատակազմի արդյունավետ կառավարում և (viii) առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործում դասավանդման և ուսումնական նյութերի ստեղծման համար, որոնք և՛ կնպաստեն, որ երեխաները ռեսուրսների օգտագործման նկատմամբ տնտեսող և ստեղծագործ մոտեցում ցուցաբերեն, և՛ կապահովեն կրթական նյութերի առկայությունը, (գ) ներառի մենթորությունը որպես վերապատրաստման դասընթացների պարտադիր բաղադրիչ՝ ապահովելով վերապատրաստվողների որակյալ հետադարձ կապը նոր գիտելիքների և հմտությունների կիրառման վերաբերյալ (համարվել է գերակայություն արդյունքների վավերացման նպատակով անցկացված հանդիպման ժամանակ):

Մշակել կոնկրետ մեխանիզմ և մեթոդաբանություն ՆԴԿ ոլորտի հաջողված պրակտիկայի բացահայտման, ինստիտուցիոնալացման և տարածման համար, որոնք կարող են փորձի փոխանակման ռեսուրս և/կամ տվյալ դառնալ քաղաքականության ոլորտում որոշումների համար:

Մշակել մասնագիտական գրախոսության (peer review) մեխանիզմ (օրինակ՝ կույր կամ կրկնակի կույր, համագործակցային, հրապարակմանը հաջորդող), որպեսզի ապահովվի ԿՁՆԱԿ-ում մշակված և/կամ հանձնարարականներ ստանալու նպատակով ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից երաշխավորված ռեսուրսների որակը:

Բացահայտել, գնահատել և ցուցակագրել առկա կրթական ռեսուրսները՝ պետական նոր չափորոշչին համապատասխան և, ԿՏԱԿ-ի հետ սերտորեն համագործակցելով, մշակել նման ռեսուրսների առցանց, օգտագործողին հարմար շտեմարան, որը հասանելի կլինի ամբողջ երկրի ՆԴԿ հաստատությունների աշխատակիցներին:

Ընտանիքի և համայնքի ներգրավվածությունը

ԿՁՆԱԿ-ի հետ համատեղ բացահայտել ՆԴԿ հաստատությունների կողմից ընտանիքի և համայնքի ներգրավման լավագույն գործելակերպերի ճանաչման մեխանիզմները հետևյալ կերպ. (ա) ներկայացնելով լավագույն փորձառությունը՝ ըստ հաղորդակցության ռազմավարական ծրագրի իրականացվող գործողություններում, (բ) աջակցել լավագույն փորձառության տարածմանն ազգային կրթական միջոցառումների ժամանակ, ինչպիսին է, օրինակ, «Edcamp Armenia»-ն, և (գ) ընդգրկել ընտանիքների ներգրավման ռազմավարության և գործելակերպերի հասանելիությունը՝ որպես ներքին և/կամ արտաքին գնահատման ցուցանիշ:

Համագործակցել ՀՀ ԱՍՀ նախարարության հետ պրակտիկ գործիքակազմի մշակման ուղղությամբ՝ ՆԴԿ հաստատությունների և համայնքային այլ ծառայությունների/ծառայողների գործընկերությունը խթանելու համար, օրինակ՝ սոցիալական աշխատողների, հատկապես սոցիալապես խոցելի ընտանիքների դեպքում:

Առաջարկել դրական ծնողավարության վերաբերյալ փաստերի վրա հիմնված և օգտագործողին հարմար ձեռնարկներ պաշտոնական կայքի՝

ծնողավարությանը նվիրված հատուկ բաժնում:

Տնային ուսուցման դրական միջավայրի ստեղծման թեման դարձնել ՆԴԿ մանկավարժների վերապատրաստման առանցքային թեմաներից մեկը:

Խրախուսել տեղական ՔՀԿ-ների և ՄՁԳ-ների մշակած ծնողավարության վերաբերյալ առկա ուղեցույցների և ձեռնարկների օգտագործումը:

Մշակել ընտանիք-ՆԴԿ հաստատություն համագործակցության մոդելներ, որոնք կօգնեն ՆԴԿ հաստատություններին համագործակցության ռազմավարության մշակման գործում:

ԿՏԱԿ-ի և ՄՁԳ-ների հետ համատեղ զարգացնել ՆԴԿ մանկավարժների կարողությունները, որպեսզի նրանք կարողանան երեխաների առաջընթացի վերաբերյալ առցանց պորտֆոլիոներ ստեղծել ու ներկայացնել դրանք ծնողներին:

ԿՁՆԱԿ-ի, ՔՀԿ-ների և ՄՁԳ-ների աջակցությամբ զարգացնելով համապատասխան կարողությունները. (ա) կողմնորոշիչ հանդիպումներ անցկացնել ծնողների հետ նախքան ընդունելությունը՝ ՆԴԿ-ի վերաբերյալ փոխադարձ ակնկալիքները հստակեցնելու նպատակով, (բ) պարբերաբար հանդիպումներ անցկացնել ծնողների համար երեխայի վարքագծային ռազմավարությունների վերաբերյալ և (գ) ամենամյա ինստիտուցիոնալ վերապատրաստման և ծրագրերի վրա հիմնված միջոցառումներ կազմակերպել՝ ներգրավելով ծնողներին և երեխաներին:

Անցում դեպի տարրական դպրոց

Մշակել ուղեցույց ՆԴԿ-ից տարրական դպրոց անցնելու վերաբերյալ, որում ընտանիքների, նախադպրոցական հաստատությունների և տարրական դասարանների մանկավարժների հետ խորհրդակցությունից հետո պետք է սահմանվի «հարթ անցումը»՝ համատեղ ակնկալիքները խթանելու և անցումային գործընթացում տարբեր հաստատությունների պարտականություններն ամրագրելու նպատակով:

Մշակել և առաջարկել ՆԴԿ հաստատությունների և տարրական դպրոցների միջև փոխանակման և փոխգործակցության խրախուսման մեխանիզմներ, օրինակ. (ա) հարթ անցմանը վերաբերող դպրոցների և ՆԴԿ հաստատությունների համագործակցության արդեն առկա հաջողված ծրագրերի տարածում, (բ) անցումը

համակարգող անձանց աշխատանքի ընդունում նախադպրոցական հաստատություններում կամ դպրոցներում, (գ) երեխայի առաջընթացի մշտադիտարկման գործիքների (օրինակ՝ պորտֆոլիոների) մշակում, որպեսզի տարրական դպրոցի ուսուցիչները պատրաստ լինեն արձագանքելու երեխայի անհատական կարիքներին, օրինակ՝ երեխայի՝ զարգացման մի շարք ոլորտներ ընդգրկող բնութագիր կամ բնութագրական զեկույց, որը ներկայացվում է ծնողներին և տարրական դպրոցին:

Խրախուսել մանկավարժական շարունակականությունն անցումային տարիների ընթացքում՝ անցկացնելով վերապատրաստման համատեղ դասընթացներ նախադպրոցական հաստատությունների և տարրական դպրոցի մանկավարժների համար և խրախուսելով խաղի վրա հիմնված ուսումնառության մեթոդաբանությունների կիրառումը:

Բավարար ժամանակ հատկացնել մանկավարժներին, որպեսզի կազմեն և իրականացնեն անցումային պլանավորմանը նպաստող աշխատանքներ, ինչպիսիք են երեխայի առաջընթացի փաստագրումը և այդ տվյալների տրամադրումը տարրական դպրոցի ուսուցիչներին:

Սերտորեն համագործակցելով տարրական դպրոցների հետ՝ ՔՀԿ-ների և ՄՁԳ-ների օգնությամբ նախապատրաստել երեխաներին և նրանց ընտանիքները դեպի տարրական դպրոց անցմանը, օրինակ՝ տարրական դպրոցներ այցեր կազմակերպելով և ծնողների համար տեղեկատվական հանդիպումներ անցկացնելով:

Առաջարկներ ՎՄԿ առանցքային գործառույթների իրականացումը և բարենպաստ միջավայրը խթանելու վերաբերյալ					
Բարենպաստ միջավայր	**Շահագրգիռ կողմ**	**Բարենպաստ միջավայր**	**Կարճա-ժամկետ**	**Միջնա-ժամկետ**	**Երկարա-ժամկետ**
Նախարարության առաջնորդում	**ՀՀ ԿԳՄՍՆ**	**Առաջարկվում է.** Մեծացնել ինստիտուցիոնալ կարողությունը ՆԴԿ ոլորտում որոշումների կայացման, մշտադիտարկման և քաղաքացիների հետ հաղորդակցության բնագավառում. **ա)** աշխատանքի ընդունելով վաղ մանկության կրթության, մշտադիտարկման և գնահատման ոլորտում փորձ ունեցող ավելի մեծ թվով աշխատակիցների, նաև քաղաքացիների հետ հաղորդակցության համար պատասխանատու աշխատակիցների, **բ)** մշակելով մշտադիտարկման և գնահատման համապարփակ շրջանակ և գործիքակազմ՝ նախանշված նպատակների համեմատ ընդունված ՆԴԿ քաղաքականությունների արդյունավետությունը մշտադիտարկելու և գնահատելու նպատակով:			
Ոլորտային քաղաքականություն և օրենսդրություն	**ՀՀ ԿԳՄՍՆ**	Մշակել **համապարփակ, փոխկապակցված և ծախսահաշվարկ պարունակող գործողությունների ծրագիր՝ հստակ թիրախներով ու առանձնացված ֆինանսավորմամբ**, ՆԴԿ հավակնոտ նպատակների իրականացման համար:			
		Համապատասխանեցնել ՆԴԿ ոլորտում հավակնոտ նպատակների իրականացումը ոչ միայն **հանրային պահանջարկին**, այլև **մասնագիտական համայնքի**, հատկապես ՆԴԿ ծառայություններ մատուցող աշխատուժի կողմից որպես **առաջնահերթություն ընկալվող խնդիրներին.** **ա)** ներդնելով հետևողական, ներառական, մասնակցային և հասանելի խորհրդատվական հետադարձ կապի մեխանիզմներ, **բ)** քաղաքականության և ընթացակարգային փոփոխություններում ներառելով համապարփակ պիլոտային փուլեր, **գ)** հաշվի առնելով բարեփոխումների ներդրման համար առավել նպաստավոր ժամանակահատվածը և արագությունը:			
		Սերտորեն համագործակցելով ՀՀ ՏԿԵՆ-ի հետ և ՔՀԿ-ների և ՄՁԳ-ների օժանդակությամբ աջակցել **մարզպետարաններին** և **ՏԻՄ-երին** հետևյալում. **ա)** զարգացնել կարողությունները տվյալների հավաքման և օգտագործման ոլորտում, օրինակ՝ կարիքների գնահատման և մշտադիտարկման մեխանիզմների ձևավորում և կիրառում, **բ)** բացահայտել ինքնուրույն որոշումների կայացման գործընթացի կանոնակարգային խոչընդոտները, **գ)** տարածել ՆԴԿ ծառայությունների տրամադրման վերաբերյալ մարզային և տեղական մակարդակով որոշումների կայացման գործընթացում հաջողված պատմությունների մոտեցումները, **դ)** մշակել վերահսկողության արդյունավետ մեթոդաբանություններ, որպեսզի դրանք ՆԴԿ հաստատություններին օգնեն բարելավելու ծառայությունների մատուցման գործընթացը (միայն ՏԻՄ-երի դեպքում):			

		Սերտորեն համագործակցելով ՀՀ ԱՍՀ և առողջապահության նախարարությունների հետ՝ մշակել հստակ և օգտագործողին հարմար (խուսափելով իրավաբանական լեզվից) **ուղեցույց** քաղաքացիների համար՝ սահմանելով պետական յուրաքանչյուր գործակալության դերն ու պարտականությունները ՆԴԿ ծառայությունների մատուցման գործընթացում նրանց գործառույթների վերաբերյալ, ինչն ավելի դյուրին և արդյունավետ կդարձնի քաղաքացիների և պետական մարմինների հաղորդակցությունը:			
	Մարզպետարան-ներ ու ՏԻՄ-եր	Ազգային քաղաքականություններին զուգահեռ և դրանց համապատասխան՝ ավելի **թիրախային քաղաքականություններ** և **ընթացակարգեր** մշակել, որոնք կանդրադառնան ՆԴԿ ծառայությունների հանրային պահանջարկի նոր միտումներին և տեղական ու մարզային մակարդակներում առկա մարտահրավերներին՝ հաշվի առնելով ՆԴԿ կարիքների բազմազանությունը գյուղական/քաղաքային բնակավայրերում: Պետական յուրաքանչյուր գործակալության դերի և պարտականությունների վերաբերյալ վերոհիշյալ ուղեցույցն ընդունել տեղական ու մարզային մակարդակներում՝ նշելով մարզային և տեղական անհրաժեշտ տվյալները:			
Հանրային պահանջարկ	**ՀՀ ԿԳՄՍ նախարարություն և Կառավարություն**	Ամբողջ երկրում ՆԴԿ հաստատությունների ցանցի ընդլայնմանը զուգահեռ, սերտորեն համագործակցելով ՄՁԳ-ների հետ. **ա)** խրախուսել ՆԴԿ ծառայության մատուցման **ավելի բազմազան մոդելների** ներդրումը, ինչպիսին է, օրինակ, երեխայի տանը նրան ՎՄԿ ապահովող անձի ինստիտուտը[1]՝ ճկուն կանոնակարգերի ընդունման և թիրախային բյուջեով ծրագրի մշակման միջոցով, **բ)** վերլուծել տարբեր ժամերին **ավելի ճկուն ծառայությունների** տրամադրմանը նպաստող և խանգարող գործոնները և մշակել ընտանիքներին աջակցող, փաստերից բխող քաղաքականություններ:			
Պլանավորում					
Շահերի պաշտպանություն և հաղորդակցություն[2]	**ՀՀ ԿԳՄՍՆ**	Սերտորեն համագործակցելով փորձագետների համայնքի և լրատվամիջոցների հետ, խորհրդակցելով առանցքային շահագրգիռ կողմերի և շահառուների հետ՝ մշակել և իրագործել **հաղորդակցության ռազմավարական պլան՝** ՆԴԿ-ի կարևորության ընկալմանը նպաստելու և տվյալ ոլորտում ընթացող լայնածավալ բարեփոխումների ընթացքը դյուրացնելու նպատակով: Հանրային ընկալումները վերափոխելու, բարեփոխումների նկատմամբ դիմադրությունը նվազեցնելու և հանրային աջակցությունը մոբիլիզացնելու համար այդ պլանի առանցքային թեմաներից կարող են լինել առնվազն հետևյալ թեմաները.			

[1]Ընտանեկան միջավայրում՝ երեխայի տանը կամ իր տանը վարձատրության դիմաց օրվա սահմանված ժամերին երեխաների խնամքի համար պատասխանատու անձ: Սովորաբար սա վաղ մանկության կրթության և խնամքի ծառայություն է, որն իրականացվում է որոշակի կանոնակարգերի համաձայն և տեղական կամ մարզային իշխանությունների վերահսկողությամբ (օրինակ՝ Միացյալ Թագավորությունում երեխաների խնամքով զբաղվող անձանց վերաբերող համապատասխան կանոնակարգերին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://www.childcare.co.uk/information/what-is-a-childminder, իսկ Նիդերլանդներում՝ այստեղ՝ https://business.gov.nl/regulation/childminders/):
[2]Այս բաժնի առաջարկներն ուղղված են նաև ՆԴԿ-ի վերաբերյալ հանրային պահանջարկի ձևավորմանն ու վերափոխմանը:

		ա) ՆԴԿ-ի կարևորությունը երեխայի զարգացման և կրթության հարցում. որպես հանրային բարիք՝ պետք է ընդգծվի դրա դերը երեխայի կյանքում և կրթության բնագավառում հետագա հաջողության հասնելու հարցում ու դրա ներդրումը հասարակության բարեկեցության գործում, **բ)** քաղաքականության և օրենսդրության բոլոր փոփոխությունների և, ամենակարևորը, **պետական նոր չափորոշչի** դերն ու նշանակությունը. ինչպիսի խնդիրների են անդրադառնալու այս փոփոխությունները, **գ) ՆԴԿ** բարեփոխումների **իրագործելիությունը**, մասնավորապես՝ ինչպես են հարթվելու շահագրգիռ կողմերի և շահառուների բարձրաձայնած սահմանափակումներն ու խնդիրները, **դ) ներառական կրթությունը,** **ե)** ՆԴԿ ծառայությունների մատուցման **որակը:**			
		ՆԴԿ շահառուներին. Ընդգրկվել հաղորդակցության ռազմավարական պլանի իրականացման գործընթացում որպես ՆԴԿ-ի հաջողված պրակտիկայի մասին կարևոր ուղերձներ հանրայնացնող դերակատարներ:			
	Հանրային լրատվամիջոցներ ու ՔՀԿ-ներ	**Հանրային լրատվամիջոցներին ու ՔՀԿ-ներին.** Համապատասխանեցնել շահերի պաշտպանությանն ու իրազեկվածության բարձրացմանն ուղղված իրենց գործողությունները հաղորդակցության ռազմավարական պլանի նպատակներին:			
Որոշումների կայացման մասնակցային գործընթաց	**ՀՀ ԿԳՄՍՆ**	**Ապահովել որոշումների կայացման մասնակցային և ներառական գործընթացը.** **ա)** մշակելով հստակ **ուղեցույց** խորհրդատվական գործընթացի վերաբերյալ՝ Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ) և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) աջակցությամբ, որը կներառի խորհրդատվական հնարավորությունների հիմնավորումը և տեսակները, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացում ներգրավման առկա մեխանիզմները (օրինակ՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը՝ e-draft, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում կամ ԿԶՆԱԿ-ում աշխատանքային հանդիպումները, ՔՀԿ-ների կազմակերպած որոշ հանրային միջոցառումները և հետադարձ կապի օղակը), բայց չի սահմանափակվի դրանցով, **բ)** պարբերաբար և նախօրոք հրապարակելով նախատեսվող խորհրդակցությունների գրաֆիկները, որպեսզի հնարավոր դառնա ՆԴԿ աշխատուժի, հատկապես մարզաբնակ աշխատակիցների մասնակցությունը, **գ)** հստակեցնել, թե ինչպիսի արձագանք են ստանում առհասարակ քաղաքացիների և մասնավորապես ՆԴԿ աշխատուժի և փորձագիտական համայնքի ներկայացրած առաջարկները, դիտարկումներն ու տեսակետները՝ բացատրելով **հետադարձ կապի օղակի** էությունը հանրային ելույթներում և խորհրդատվական ուղեցույցներում:			

		Ավելի պրոակտիվ լինել **ՆԴԿ ծառայություններ տրամադրող մասնավոր հաստատությունների**, հատկապես Մասնավոր մանկապարտեզների ասոցիացիայի հետ հարաբերություններում, որպեսզի հնարավոր լինի առաջարկել համապատասխանեցված, փաստերի վրա հիմնված քաղաքականության լուծումներ՝ **ա)** նաև մասնավոր ծառայություններ մատուցողներին ներկայացնելով համապատասխան ողջ տեղեկատվությունը քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ, **բ)** հրավիրելով նրանց մասնակցելու պլանավորված խորհրդակցություններին, **գ)** ծանոթանալով նրանց՝ փաստերի վրա հիմնված տեսակետներին քաղաքականության և ընթացակարգերի նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ:			
		ՏԻՄ-երին, մասնավորապես ավագանու անդամներին. Ավելի արդյունավետորեն հաղորդակցվել համայնքի անդամների հետ մասնակցային մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են ավագանու խորհրդի նիստերը, հանրային քննարկումները, խորհրդակցական հանդիպումները՝ համայնքում առաջնահերթ վերանորոգման ենթակա ՆԴԿ հաստատությունների ցանկը կազմելու և այլ համայնքահենք ՆԴԿ խնդիրներին արձագանքելու նպատակով:			
Որակի ապահովում		**Կառավարությանը.** Խորհրդակցելով համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ ուսումնասիրել տեսչական մարմինների **մանդատների** ընդլայնման հնարավորությունը՝ այդ մանդատների շրջանակում **խորհրդատվական գործառույթի** հնարավորություն ընձեռելու նպատակով՝ նպաստելու համար ՆԴԿ հաստատություններում խախտումների կանխարգելմանը. **ա)** անցկացնելով ՀՀ կրթության տեսչական մարմնի և առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնակարգային և ինստիտուցիոնալ շրջանակների համապարփակ **վերլուծություն**՝ վերհանելով խորհրդատվական գործառույթի ներդրմանը նպաստող գործոնները և մարտահրավերները, **բ)** մշակելով խորհրդատվության ապահովման համապատասխան **ընթացակարգ**, **գ)** հավաքագրելով անհրաժեշտ փորձառություն ունեցող **աշխատակիցների**:			
		ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը. Առանցքային նպաստավոր գործոններն ու մարտահրավերները բացահայտելու, նաև քաղաքականության և ընթացակարգերի՝ փաստերից բխող վերանայումն իրականացնելու համար **մշակել մշտադիտարկման և գնահատման** համապարփակ **մեթոդաբանություններ**՝ հետևյալի արդյունավետությունը վերլուծելու նպատակով. **ա)** ֆինանսավորման նոր մեխանիզմ (մեկ սանի հաշվարկով ֆինանսավորում), **բ)** պետական դրամաշնորհների տրամադրում ՆԴԿ ծառայությունների մատուցման այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ստեղծման համար, **գ)** ՆԴԿ հաստատությունների ներքին և արտաքին գնահատման նոր պրակտիկա:			
		ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը. ՆԴԿ ծառայությունների մատուցման այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրմանը նպաստելու համար՝			

		ա) վերլուծել ՆԴԿ այլընտրանքային, ծախսարդյունավետ ծառայությունների ներդրմանն ուղղված պետական ֆինանսավորման մասին առաջին հայտարարության ընթացքն ու արդյունքները, **բ)** հիմնվելով վերլուծության արդյունքների վրա՝ համայնքների համար մշակել **հայտերի ներկայացման** մանրամասն **ուղեցույց** և **աջակցության մեխանիզմ** մինչև պետական դրամաշնորհներ ստանալու համար հայտադիմումներ ներկայացնելու **հաջորդ փուլը:**			
		Որակի ապահովման չափորոշիչների ներդրման եղանակով մշակել պետական ֆինանսավորման միջոցով վարձատրվող փորձագիտության հստակ որակի ապահովման մեխանիզմներ կարողությունների համար:			
		ՀՀ ՏԿԵՆ-ին. Վերլուծել համայնքների խոշորացման ազդեցությունը խոշորացված համայնքներում 2023 թվականի ՆԴԿ ծառայությունների մատուցման գործընթացի վրա՝ ԿԳՄՍ նախարարության հետ սերտ համագործակցությամբ մշակելով պետական քաղաքականության ազդեցության վերլուծության համապարփակ մեթոդաբանություն:			
		ԿԶՆԱԿ-ին. **Մշակել** հստակ և թափանցիկ **մեխանիզմներ** անհրաժեշտ փորձագիտական կարողությունները ներգրավելու նպատակով, մասնավորապես՝ ա) պետական չափորոշչի կիրարկման ուղեցույցներ, բ) ՆԴԿ դասավանդման և ուսումնական ռեսուրսներ, հատկապես խաղի վրա հիմնված ուսումնառության մեթոդաբանությունների կիրառման վերաբերյալ ձեռնարկ ՆԴԿ դաստիարակների համար, գ) որակի ապահովման չափորոշիչներ և ցուցիչներ ՇՄԶ ծրագրերի համար:			
		Կրթության տեսչական մարմնին. Սերտորեն համագործակցելով ԿԶՆԱԿ-ի հետ՝ կանոնակարգային համապատասխան փոփոխությունների առկայության դեպքում տեսչական գործիքակազմում ՆԴԿ կառուցվածքային գործընթացի ցուցիչներին զուգահեռ ներառել ՆԴԿ **գործընթացային որակի ավելի շատ ցուցիչներ:**			
		ՏԻՄ-երին՝ ՔՀԿ-ների և ՄԶԳ-ների աջակցությամբ. ա) մշակել և լայնորեն տարածել ընդունելության նոր ընթացակարգի պահանջներին համապատասխան ՆԴԿ հաստատություն երեխաների ընդունելության վերաբերյալ հստակ և օգտագործողին հարմար **ուղեցույցներ** և՛ ՆԴԿ հաստատությունների ղեկավարության, և՛ ծնողների համար, բ) զարգացնել համապատասխան աշխատակիցների՝ ՆԴԿ ծառայությունների տրամադրումը վերահսկելու կարողությունները, (գ) ստեղծել վերահսկողության մեխանիզմ ծնողների և տարրական դպրոցների ու ՏԻՄ-երի ներկայացուցիչների ներգրավման միջոցով՝ երաշխավորելու համար այլընտրանքային ՆԴԿ ծառայությունների մատուցման որակը:			

		ՆԴԿ հաստատություններին. Համատեղ ֆինանսավորել **փոխարինող մանկավարժի** հաստիքը թաղամասի մի շարք ՆԴԿ հաստատությունների համար՝ ծառայությունների շարունակական տրամադրումը և ՇՄԶ ծրագրերում մանկավարժների որակյալ մասնակցությունը ապահովելու նպատակով:			
Պաշտոնական վիճակագրություն և ԿԿՏՀ	**ՀՀ վիճակագրական կոմիտե**	**ա)** մշակել ՆԴԿ-ին վերաբերող մետատվյալների հստակ սահմանումներ՝ քաղաքականության մշակման և տվյալների ստացման նպատակներով պաշտոնական վիճակագրության օգտագործումը դյուրացնելու նպատակով, **բ)** ավելի հաճախ խորհրդատվություն տրամադրել պաշտոնական վիճակագրական տվյալների հավաքման համար պատասխանատու մարմիններին՝ «Պետական վիճակագրության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:			
		ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը. Սերտորեն համագործակցելով ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՏԿԵ, ԱՍՀ և առողջապահության նախարարությունների հետ՝ համակարգել տվյալների փոխանակման մեխանիզմները համապարփակ ԿԿՏՀ-ի մշակումն ապահովելու նպատակով՝ ակտիվորեն ներգրավելով ԿՏԱԿ-ը, ԿԶՆԱԿ-ը և հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը համակարգմանը վերաբերող համապարփակ **տեխնիկական առաջադրանքի** կազմման գործընթացում:			
		Կառավարությանը. Ապահովել ՆԴԿ հաստատությունների **անհրաժեշտ տեխնիկական կարողությունների** առկայությունը, այդ թվում՝ համակարգիչները և համացանցին միացումը, որպեսզի ապահովվի ԿԿՏՀ-ի և վարչական ռեգիստրի համար ՆԴԿ հաստատությունների վերաբերյալ ճշգրիտ տվյալների հավաքումը՝ տեխնիկական աջակցություն ներգրավելով մասնավոր հատվածից և ՄԶԳ-ներից:			
		ԿՏԱԿ-ին. **ա)** ապահովել համապատասխան **վերապատրաստում** ՆԴԿ հաստատության՝ ԿԿՏՀ-ի համար անհրաժեշտ տվյալների հավաքման համար պատասխանատու աշխատակիցների համար, **բ)** ապահովել **աջակցության համակարգի** առկայությունը ճշգրիտ տվյալներ հավաքելու նպատակով՝ ավելի մեծ թվով աշխատակիցների աշխատանքի ընդունելով, **գ)** սերտորեն համագործակցելով տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների և ՆԴԿ հաստատությունների հետ՝ մշակել ավելի համապարփակ **դիսագրեգացված տվյալներ** ՆԴԿ մակարդակում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների վերաբերյալ և տվյալներ այն ՆԴԿ հաստատությունների մասին, որոնք խելամիտ հարմարեցումներ են կատարել ներառական ՆԴԿ ծառայություններ ապահովելու նպատակով:			
		ՆԴԿ հաստատությանը. Ընդունել/նշանակել ԿԿՏՀ տվյալների հավաքման համար պատասխանատու հատուկ աշխատակից:			

Ներառականություն և հավասար հնարավորություններ	**ՀՀ ԿԳՄՍՆ**	Սերտորեն համագործակցելով ՄԶԳ-ների և ՀԿ-ների հետ. **ա)** գնահատել առանցքային դերակատարների, հատկապես հանրապետական և մարզային տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների և ՆԴԿ հաստատությունների **ինստիտուցիոնալ կարողություններն ու կարիքները** գործողությունների ծրագրի իրականացման գործում, **բ)** բավարարել տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների և ՆԴԿ հաստատությունների **առաջնահերթ կարիքները՝** աջակցելով նրանց գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացման գործում, **գ)** սերտորեն համագործակցելով ՀՀ ԱՍՀ նախարարության հետ՝ հստակեցնել **միասնական սոցիալական ծառայության դերը** ՆԴԿ հաստատություններում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ընդունմանը նպաստելու հարցում, **դ)** մշակել **գնահատման** համապարփակ **մեխանիզմ՝** ՆԴԿ հաստատություններում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ընդունման համար լրացուցիչ ֆինանսավորման կիրառման արդյունավետությունը գնահատելու համար, **ե)** համագործակցելով ԿԶՆԱԿ-ի և հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ՝ մշակել լավ համակարգված, կանոնավոր **հետադարձ կապի մեխանիզմ** ներառական պրակտիկայի վերաբերյալ առանցքային շահառուներից անմիջապես հետադարձ կապ ապահովելու համար, որն էլ ցույց կտա գործողությունների ծրագրի իրականացման ընթացքը:			
		ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը. Սերտորեն համագործակցելով ՀՀ ԱՍՀ և առողջապահության նախարարությունների հետ՝ մշակել ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ հստակ և օգտագործողին հարմար **ուղեցույցներ՝** կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաներին միասնական ծառայություններ տրամադրելու համար:			
		ՀՀ ԱՍՀ նախարարությանը. Սերտորեն համագործակցելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ՝ մշակել հատուկ **ֆինանսավորման մեխանիզմ**, որպեսզի ապահովվի հատուկ խնամքի հաստատություններում (մանկատներում) գտնվող երեխաների, հատկապես 5-6 տարեկան երեխաների ներգրավումը ՆԴԿ-ում, օրինակ. **ա)** հավելյալ ֆինանսավորում ապահովելով մոտակա ՆԴԿ հաստատությանը՝ խնամք իրականացնող հաստատությունում կանոնավոր կերպով ՆԴԿ տրամադրելու նպատակով, **բ)** տեղափոխման վճար ապահովելով հատուկ խնամքի հաստատություններին, որպեսզի ապահովվի երեխաների հասանելիությունը ՆԴԿ հաստատությանը, **գ)** խթաններ, օրինակ՝ հարկային արտոնություններ առաջարկելով մասնավոր դերակատարներին՝ հատուկ խնամքի հաստատություններում գտնվող առնվազն 5-6 տարեկան երեխաների՝ մոտակա նախակրթարաններում ընդունելությանն աջակցելու դիմաց:			

		Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնին. **ա)** հաշվի առնել դպրոցների մակարդակում համընդհանուր ներառական կրթության ներմուծումից և ՆԴԿ մակարդակում համընդհանուր ներառականության սկզբունքի ներդրման փոքրածավալ նախաձեռնություններից քաղված դասերը, այդ թվում՝ ենթակառուցվածքների և կրթական ռեսուրսների առկայությանը, կարողությունների զարգացմանը և բարեփոխումների վերաբերյալ հաղորդակցությանը վերաբերող տեղեկատվությունը, նաև ուղեցույց առաջարկել **ՆԴԿ հաստատություններին և ընտանիքներին** ՆԴԿ մակարդակում համընդհանուր ներառական կրթության սկզբունքի ներդրման գործնական քայլերի վերաբերյալ, **բ)** սերտորեն համագործակցելով ԿԶՆԱԿ-ի, ՔՀԿ-ների և ՄԶԳ-ների հետ՝ մոբիլիզացնել մանկավարժների/դասընթացավարների վերապատրաստման դասընթացների և նախնական կրթության ակադեմիական ծրագրերի/դասընթացների մշակման ոլորտում առկա փորձագիտական գիտելիքը՝ **մանկավարժների վերապատրաստման** համապարփակ **դասընթաց** մշակելու նպատակով, որը կպարունակի մենթորական բաղադրիչ և կունենա ամբողջ երկրում դասընթացն անցկացնելու հստակ ժամանակացույց, **գ)** աջակցել ՆԴԿ հաստատություններին կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ընդունելությանը նպաստելու համար **խելամիտ հարմարեցումներ** կատարելու գործընթացում՝ ներառելով առաջարկներ երեխայի ուսումնական պլանում խելամիտ փոփոխություններ կատարելու վերաբերյալ, **դ)** սերտորեն համագործակցելով ԿԶՆԱԿ-ի հետ՝ **մշակել մշտադիտարկման** համակարգ, ներառյալ համընդհանուր ներառական ՆԴԿ-ին անցման առաջընթացի գնահատման մեթոդաբանությունն ու գործիքակազմը:			
		ՏԻՄ-երին՝ ՔՀԿ-ների և ՆԴԿ հաստատությունների աջակցությամբ՝ **ա)** մոբիլիզացնել համայնքային ռեսուրսները, օրինակ՝ ստեղծելով առանձին հիմնադրամ համընդհանուր ներառական կրթության իրագործմանը ֆինանսապես աջակցելու նպատակով, տարածելով արդեն առկա լավագույն փորձառությունը, ինչպիսին է, օրինակ, Սորս հիմնադրամը, **բ)** մոբիլիզացնել համայնքի դպրոցներին ցուցաբերվող աջակցությունը՝ ՆԴԿ մակարդակում համընդհանուր ներառական կրթություն ներդնելու նպատակով. ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ խորհրդակցելով, օրինակ, լրացուցիչ ֆինանսական միջոցներ հատկացնել՝ ներգրավելու հատուկ մանկավարժների, խոսքի զարգացման մասնագետների, հոգեբանների և այլ անհրաժեշտ մասնագետների՝ ՆԴԿ հաստատություններում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաներին աջակցություն ապահովելու նպատակով, **գ)** գնահատել ՆԴԿ հաստատությունների՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված երեխաների ինտեգրմանն ուղղված հայեցողական ջանքերի արդյունավետությունը և, հիմնվելով արդյունքների վրա, հավելյալ միջոցներ հատկացնել հաջողված պրակտիկան տարածելու համար, **դ)** համագործակցելով մարզպետարանների հետ՝ ՆԴԿ հաստատություններում այս երեխաներին հոգեբանական աջակցության հասանելիություն ապահովել:			

Չափորոշչի մշակում և կիրարկում					
	ՀՀ ԿԳՄՍՆ	Համագործակցելով ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և ՄԶԳ-ների, նաև մարզպետարանների ու ՏԻՄ-երի հետ՝ **ա)** մշակել համապարփակ **գործողությունների ծրագիր** պետական նոր չափորոշչի կիրարկման համար, ներառյալ առանցքային նպաստող գործոնների ու մարտահրավերների քարտեզագրումը և մշտադիտարկման ու գնահատման համապարփակ շրջանակը, **բ)** մարզպետարանների և ՏԻՄ-երի հետ համագործակցելով՝ մշակել պետական նոր չափորոշչի **տարածման** համապարփակ **ռազմավարություն,** ներառյալ ՆԴԿ ոլորտում աշխատող անձանց համար ազգային խորհրդատվական մի շարք հանդիպումների կազմակերպումը՝ նրանց հարցերին անդրադառնալու նպատակով, **գ)** մշակել **տեխնիկական առաջադրանք** և փաստերից բխող **մեթոդաբանություն** նոր չափորոշչի գալիք փորձարկման համար:			
		ԿԶՆԱԿ-ին. **ա)** մշակել **մանկավարժների** համար պետական նոր չափորոշչի կիրառման վերաբերյալ **ձեռնարկ** և ՆԴԿ մակարդակում խաղի վրա հիմնված ուսումնառության կիրառման վերաբերյալ համապարփակ ուղեցույց, **բ)** մշակել **ուսումնական նյութեր** և առաջարկել **խորհրդատվություն՝** կարողունակությունների վրա հիմնված չափորոշչի և մանկահասակ երեխաների շրջանում դասավանդման և ուսումնառության վրա դրա հետևանքների վերաբերյալ ընդհանուր ընկալում ձևավորելու հարցում ՆԴԿ մանկավարժներին աջակցելու նպատակով, **գ)** ԿՏԱԿ-ի հետ համագործակցելով՝ մշակել և ակտիվորեն շահագործել **հարթակ՝** ներկայացնելու նոր չափորոշչի կիրարկման ընթացքում հաջողված պատմություններն ու մարտահրավերները՝ իրականացման գործընթացն ավելի արդյունավետ կառավարելու, ինչպես նաև հետագա վերանայման համար հուսալի տվյալներ ստեղծելու նպատակով, **դ)** նոր չափորոշչի կիրարկման մշտադիտարկման գործընթացում ներառել **մասնավոր ՆԴԿ հաստատությունները**, որպեսզի ապահովվի նրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին:			
Աշխատուժի զարգացում					
Մանկավարժների հավաքագրում և պահում ոլորտում	**ՀՀ ԿԳՄՍՆ**	ԿԶՆԱԿ-ի հետ համատեղ վերանայել ՆԴԿ մանկավարժական անձնակազմի **որակավորման շրջանակը** և **հստակեցնել առանցքային կարողությունները՝** նոր չափորոշչի պահանջներին համապատասխան:			
		ՆԴԿ մանկավարժների պակասի խնդիրը լուծելու համար ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը. **ա)** ՏԻՄ-երի հետ համատեղ գնահատել մանկավարժական աշխատուժի պակասը և ամեն տարի ավելացնել ՆԴԿ մանկավարժների որակավորման պետական քվոտաները՝ այդպիսով խրախուսելով երիտասարդ շրջանավարտներին ընտրել ՆԴԿ դասավանդման ծրագրերը,			

		բ) սահմանել մեխանիզմներ, որոնք արտացոլում են ՆԴԿ մանկավարժի կատարողականի և նրա վարձատրության կապը՝ մանկավարժին ոլորտում պահելու նպատակով: Քանի որ ներկայում ՀՀ ԿԳՄՍՆ-ն նման մեխանիզմ է մշակում, կարևոր է անցկացնել խորհրդատվություններ և նախագծել պիլոտային փուլ՝ տվյալ մեխանիզմի արդյունավետությունը գնահատելու համար:			
		ԿԶՆԱԿ-ին. Մշակել ՆԴԿ մանկավարժի կատարողականի հստակ ցուցիչներ, ներառյալ խնամքի ցուցիչներ (համարվել է գերակայություն արդյունքների վավերացման նպատակով անցկացված հանդիպման ժամանակ):			
		Նախնական կրթություն առաջարկող հաստատություններին ու դպրոցներին. Անցկացնել համատեղ մասնագիտական **կողմնորոշիչ հանդիպումներ**, որպեսզի խրախուսեն շրջանավարտներին դիմել ՆԴԿ որակավորման ծրագրերին:			
		ՏԻՄ-երին. **ա)** մշակել համապատասխանեցված մեխանիզմներ իրենց համայնքներում ՆԴԿ մանկավարժներ հավաքագրելու նպատակով, օրինակ՝ ֆինանսավորել համայնքի որևէ անդամի վերապատրաստումը ՆԴԿ մանկավարժի աշխատանքի համար՝ այն պայմանով, որ նա որոշակի ժամանակահատվածում ՆԴԿ հաստատությունում կաշխատի: **բ)** **ՏԻՄ-երը** և **ՆԴԿ հաստատությունները** պետք է ներդրում կատարեն ուսուցչի օգնականների՝ երեխաների հոգեբանության և մանկավարժության ոլորտում վերապատրաստման գործընթացում՝ ՎՄԿ ծառայությունների որակը բարելավելու նպատակով:			
Նախնական կրթություն և վերապատրաստում	**Նախնական կրթություն և մանկավարժների վերապատրաս-տում առաջարկող հաստատու-թյուններին**	**Շարունակել տրամադրվող ՎՄԿ ծրագրերի բարելավմանն ուղղված իրենց ջանքերը**. **ա)** ներմուծելով համապատասխան **դասընթացներ**, որոնք բավարարում են կարիքները՝ պետական նոր չափորոշչին, հատկապես խաղի վրա հիմնված ուսումնառության մեթոդաբանություններին համապատասխան, **բ)** առաջարկելով համագործակցության ռազմավարություններ ընտանիքների և համայնքների հետ, ինչպես նաև ծնողներին և մանկահասակ երեխաներին մեդիագրագիտության և ֆինանսական գրագիտության հիմունքներին ծանոթացնող **մեթոդաբանություններ**, **գ)** **գործնական աշխատանքի** նախագծման և իրականացման բարելավման միջոցով, **դ)** **ՆԴԿ մանկավարժների որակավորման առցանց դասընթացների** մշակման և անցկացման միջոցով:			
ՇՄԶ	**ՀՀ ԿԳՄՍՆ**	ԿԶՆԱԿ-ի և ԿՏԱԿ-ի հետ համատեղ ձևավորել օգտագործողին հարմար, հասանելի **հարթակ** (հավանաբար որպես բոլոր մակարդակների մանկավարժների ՇՄԶ–ին ուղղված ավելի համապարփակ հարթակի մաս), որտեղ ՇՄԶ հնարավորությունների մասին տեղեկատվություն է զետեղված: Այն ՆԴԿ մանկավարժների համար ավելի հասանելի կդարձնի վերապատրաստման որակյալ դասընթացների հնարավորությունների մասին տեղեկատվությունը, ներառյալ վերապատրաստող կազմակերպությունների տվյալները, վերապատրաստման դասընթացների նկարագրությունը և թիրախային լսարանը:			

		ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը. ԿԶՆԱԿ-ի հետ համատեղ, համագործակցելով ՔՀԿ-ների և ՄԶԳ-ների հետ, կազմել համապարփակ տեխնիկական առաջադրանք ՇՄԶ ծրագրերի նախագծման համար՝ հարմարեցնելով հանրակրթական հաջորդ մակարդակի հաջողված քաղաքականություններն ու պրակտիկան, ինչպես նաև մշտադիտարկման համապատասխան գործիքները՝ ՇՄԶ ծառայությունների մատակարարման որակն ապահովելու նպատակով: Տեխնիկական առաջադրանքը պետք է. **ա)** ներառ**ի կարիքների գնահատում՝** որպես վերապատրաստման կառուցվածքի մաս, **բ)** կենտրոնանա **բարձրաձայնված կարիքների** վրա, ինչպիսիք են. (i) կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու մեթոդաբանություններ, **(ii)** երեխաների հոգեբանություն և տարիքին բնորոշ առանձնահատկություններ, **(iii)** դժվար վարքագծի հաղթահարում, (iv) խաղի վրա հիմնված ուսումնառության մեթոդաբանություններ, (v) ՆԴԿ կանոնակարգային շրջանակի մեկնաբանում և գործնական հետևանքներ, (vi) անհրաժեշտ փաստաթղթավարություն, (vii) աշխատակազմի արդյունավետ կառավարում, (viii) առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործում դասավանդման և ուսումնական նյութերի ստեղծման համար, որոնք և՛ կնպաստեն, որ երեխաները ռեսուրսների օգտագործման նկատմամբ տնտեսող և ստեղծագործ մոտեցում ցուցաբերեն, և՛ կապահովեն կրթական նյութերի առկայությունը, **բ)** ներառի **մենթորությունը** որպես վերապատրաստման դասընթացների պարտադիր բաղադրիչ՝ ապահովելով վերապատրաստվողների որակյալ հետադարձ կապը նոր գիտելիքների և հմտությունների կիրառման վերաբերյալ:			
		ԿԶՆԱԿ-ին. **ա)** մշակել կոնկրետ **մեխանիզմ** և **մեթոդաբանություն** ՆԴԿ ոլորտի հաջողված պրակտիկայի բացահայտման, ինստիտուցիոնալացման և տարածման համար, որոնք կարող են փորձի փոխանակման ռեսուրս և/կամ տվյալ դառնալ քաղաքականության ոլորտում որոշումների համար, **բ)** մշակել **գործընկերային վերանայման** (peer review) մեխանիզմ (օրինակ՝ կույր կամ կրկնակի կույր, համագործակցային, հրապարակմանը հաջորդող), որպեսզի ապահովվի ԿԶՆԱԿ-ում մշակված և/կամ հանձնարարականներ ստանալու նպատակով ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից երաշխավորված ռեսուրսների որակը, **գ)** բացահայտել, գնահատել և ցուցակագրել առկա կրթական ռեսուրսները՝ պետական նոր չափորոշչին համապատասխան, և ԿՏԱԿ-ի հետ սերտորեն համագործակցելով՝ մշակել նման ռեսուրսների առցանց, օգտագործողին հարմար շտեմարան, որը հասանելի կլինի ամբողջ երկրի ՆԴԿ հաստատությունների աշխատակիցներին:			
Ընտանիքի և համայնքի ներգրավվածությունը					
	ՀՀ ԿԳՄՍՆ	ԿԶՆԱԿ-ի հետ համատեղ բացահայտել ՆԴԿ հաստատությունների կողմից ընտանիքի և համայնքի ներգրավման լավագույն գործելակերպերի ճանաչման մեխանիզմները, օրինակ. **ա)** ներկայացնել **լավագույն փորձառությունը՝** ըստ հաղորդակցության ռազմավարական ծրագրի իրականացվող գործողություններում,			

		բ) աջակցել լավագույն փորձառության **տարածմանն** ազգային կրթական միջոցառումների ժամանակ, ինչպիսին է, օրինակ, «Edcamp Armenia»-ն, **գ)** ընդգրկել ընտանիքների ներգրավման ռազմավարության և գործելակերպերի **հասանելիությունը՝** որպես ներքին և/կամ արտաքին գնահատման ցուցանիշ:			
		ՀՀ ԿԳՄՍ և ԱՍՀ նախարարություններին. Համագործակցել պրակտիկ գործիքակազմի մշակման ուղղությամբ՝ ՆԴԿ հաստատությունների և համայնքային այլ ծառայությունների գործընկերությունը խթանելու համար, օրինակ՝ սոցիալական աշխատողների, հատկապես սոցիալապես խոցելի ընտանիքների դեպքում:			
		ԿԶՆԱԿ-ին. **ա)** առաջարկել **դրական ծնողավարության** վերաբերյալ փաստերի վրա հիմնված և օգտագործողին հարմար ձեռնարկներ պաշտոնական կայքի՝ ծնողավարությանը նվիրված բաժնում, **բ)** **տնային ուսուցման դրական միջավայրի ստեղծման թեման** դարձնել ՆԴԿ մանկավարժների վերապատրաստման առանցքային թեմաներից մեկը, **գ)** խրախուսել տեղական ՔՀԿ-ների և ՄԶԳ-ների մշակած **ծնողավարության վերաբերյալ առկա ուղեցույցների և ձեռնարկների օգտագործումը**, **դ)** ԿՏԱԿ-ի և ՄԶԳ-ների հետ համատեղ զարգացնել ՆԴԿ մանկավարժների կարողությունները, որպեսզի կարողանան երեխաների առաջընթացի վերաբերյալ առցանց պորտֆոլիոներ ստեղծել ու ներկայացնել դրանք ծնողներին:			
		ՆԴԿ հաստատություններին՝ ԿԶՆԱԿ-ի, ՔՀԿ-ների և ՄԶԳ-ների աջակցությամբ. Զարգացնելով համապատասխան կարողությունները՝ **ա)** **կողմնորոշիչ հանդիպումներ** անցկացնել ծնողների հետ նախքան ընդունելությունը՝ ՆԴԿ-ի վերաբերյալ փոխադարձ ակնկալիքները հստակեցնելու նպատակով, **բ)** պարբերաբար **հանդիպումներ** անցկացնել ծնողների համար երեխայի վարքագծային ռազմավարությունների վերաբերյալ, **գ)** ամենամյա **ինստիտուցիոնալ վերապատրաստման և ծրագրերի վրա հիմնված միջոցառումներ** կազմակերպել՝ ներգրավելով ծնողներին և երեխաներին:			
Անցում դեպի տարրական դպրոց					
	ՀՀ ԿԳՄՄՆ	Մշակել **ուղեցույց** ՆԴԿ-ից տարրական դպրոց անցնելու վերաբերյալ, որում ընտանիքների, նախադպրոցական հաստատությունների և տարրական դասարանների մանկավարժների հետ խորհրդակցությունից հետո պետք է սահմանվի «հարթ անցումը»՝ համատեղ ակնկալիքները խթանելու և անցումային գործընթացում տարբեր հաստատությունների պարտականություններն ամրագրելու նպատակով:			
		ԿԶՆԱԿ-ին. **Մշակել և առաջարկել ՆԴԿ հաստատությունների և տարրական դպրոցների միջև փոխանակման և փոխգործակցության խրախուսման մեխանիզմներ, օրինակ՝** **ա)** սահուն անցմանը վերաբերող դպրոցների և ՆԴԿ հաստատությունների համագործակցության արդեն առկա հաջողված ծրագրերի տարածում,			

		բ) անցումը համակարգող անձանց աշխատանքի ընդունում նախադպրոցական հաստատություններում կամ դպրոցներում, **գ)** երեխայի առաջընթացի մշտադիտարկման գործիքների մշակում, որպեսզի տարրական դպրոցի ուսուցիչները պատրաստ լինեն արձագանքելու երեխայի անհատական կարիքներին, օրինակ՝ երեխայի՝ զարգացման մի շարք ոլորտներ ընդգրկող բնութագիր կամ բնութագրական զեկույց, որը ներկայացվում է ծնողներին և տարրական դպրոցին: **Մանկավարժների վերապատրաստման կազմակերպություններին.** Խրախուսել մանկավարժական շարունակականությունն անցումային տարիների ընթացքում՝ անցկացնելով **վերապատրաստման համատեղ դասընթացներ** նախադպրոցական հաստատությունների և տարրական դպրոցի մանկավարժների համար և խրախուսելով խաղի վրա հիմնված ուսումնառության մեթոդաբանությունների կիրառումը:			
		ՆԴԿ հաստատություններին. **ա)** բավարար ժամանակ հատկացնել մանկավարժներին, որպեսզի կազմեն և իրականացնեն անցումային պլանավորմանը նպաստող աշխատանքներ, ինչպիսիք են երեխայի առաջընթացի փաստագրումը և այդ տվյալների տրամադրումը տարրական դպրոցի ուսուցիչներին, **բ)** սերտորեն համագործակցելով տարրական դպրոցների հետ՝ ՔՀԿ-ների և ՄՁԳ-ների օգնությամբ նախապատրաստել երեխաներին և նրանց ընտանիքները դեպի տարրական դպրոց անցմանը, օրինակ՝ տարրական դպրոցներ այցեր կազմակերպելով և ծնողների համար տեղեկատվական հանդիպումներ անցկացնելով:			

Facebook.com/UNICEFArmenia

Twitter.com/UNICEFArmenia

Instagram.com/UNICEF_Armenia

YouTube.com/UNICEFArmenian

yerevan@unicef.org

www.unicef.am

unicef

յուրաքանչյուր երեխայի համար